ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի
2023 թ. հոկտեմբերի ____ -ի
թիվ _____ հրամանի

ԵՊՀ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի հաշվետվություն

Ուսումնական ստորաբաժանում՝	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ
Տնօրեն՝	Ա. Հ. Մակարյան
Ժամանակահատված՝	2022-23 ուստարի, 2023թ. սեպտեմբեր-դեկտեմբեր
Ներկայացման ամսաթիվ	22.12.2023

Իջևան 2023

Մաս 1. Ուսումնական ստորաբաժանման գործողությունների պլանի կատարողական

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (ԵՊՀ ԻՄ) զարգացման գործող ռազմավարությունը նպատակաուղղված է համալսարանի արդիականացման և թվային վերափոխման խնդիրների ներդաշնակեցմանը, արտաքին և միջազգային համագործակցության, նոր կրթական ծրագրերի, գիտահետազոտական, մեթոդական և կադրային ճկուն գործունեության շնորհիվ համալսարանի զարգացման նոր հայեցակարգի ձևավորմանը, որի հիմքում ուսանողի հաջողության, մատչելի կրթության, ժողովրդավարական միջավայրի, ակտիվ համագործակցության, նորարարության ու ստեղծարարության հիմնարար արժեքներն են:

Հաշվետու 2022-23 ուստարում մասնաճյուղն իր գործունեությունը կազմակերպել է ԵՊՀ ԻՄ 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի և դրա իրականացման ժամանակացույցի հիման վրա: Պլանավորված գործողություններն ուղղորդված են եղել ապահովելու մասնաճյուղի ռազմավարական 3 նպատակների իրականացումը. բարձրորակ կրթություն, գիտություն և նորարարություն, հանրային ներգրավում:

Մասնաճյուղի գործունեության հիմնական նպատակն է անխափան և արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը՝ ուսանողների համար ապահովելով անհրաժեշտ կրթական միջավայր ու ռեսուրսներ, կրթությունն իրականացնել բարձրակարգ դասախոսական կազմի ներգրավմամբ, մատուցել նորարարական ու առաջադեմ կրթություն, նաև նպաստել դիմորդների թվի աճին և իր շրջանավարտների ապագա կարիերայի ձևավորմանը, հետևողական լինել ուսումնառության գործընթացում հանդիպող խնդիրների և դրանց լուծման, կոնկրետ գործընթացների բարելավման և արդյունավետության բարձրացման նկատմամբ:

Մասնաճյուղն իր աշխատանքի արդյունքները գնահատելու և հանրությանը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին հրապարակում է իր Գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը, որոնց հիման վրա էլ կազմվել է այս հաշվետվությունը:

2022թ. սեպտեմբերից 2023թ. դեկտեմբեր հաշվետու ժամանակահատվածի գործողությունների պլանով մասնաճյուղն իր ուսումնական և վարչական ստորաբաժանումների հետ համատեղ ռազմավարական ծրագրի 3 նպատակների 19 խնդիրների 98 գործողությունների իրականացման համար մշակել է մարտավարություն՝ շուրջ 288 նպատակային քայլերով և 211 ակնկալվող ցուցիչներով:

Հաշվետու ժամանակահատվածում **գործողությունների պլանի** իրականացման շրջանակներում մասնաճյուղը հաջողությամբ իրականացրել է հետևյալ գործընթացները.

1. Կրթական, գիտական, կազմակերպչական գործընթացներն արդյունավետ իրականացնելու և մասնաճյուղի գործունեության և համակարգման համար **մշակվել կամ վերանայվել են** շուրջ 37 փաստաթուղթ (14 կարգ, 1 քաղաքականություն, 1 կանոնակարգ, 21 այլ փաստաթղթեր՝ ծրագրեր, ուղեցույցներ, մեխանիզմներ, ձևաչափեր և այլն), որոնցից 24-ը հաստատվել են

մասնաճյուղի ԳԽ-ում, 13-ը՝ ընթացքի մեջ են։

2. **Մասնագիտական կողմնորոշման մեծածավալ** և ուղղորդված աշխատանքներ է տարվել դիմորդների շրջանում։ Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում 2022-23 ուստարում իրականացվել են 59 տարատեսակ ծրագրեր և միջոցառումներ. այդ թվում այցեր Տավուշի և Գեղարքունիքի մարզի շուրջ **46** ավագ և միջնակարգ դպրոցներ, որի ընթացքում ապագա դիմորդներին ներկայացվել են մասնաճյուղի կրթական ծրագրերը, ռեսուրսները, կազմակերպվել են աշակերտների **7** ճանաչողական այցեր մասնաճյուղ և «բաց դռների» օրեր, որոնց ընթացքում աշակերտները շփվել են ուսանողների և դասախոսների հետ, մասնակցել են դասընթացների, ծանոթացել մասնաճյուղի կառուցվածքին և հնարավորություններին, դպրոցներում կազմակերպվել են ինտելեկտուալ խաղեր, և ԵՊՀ նախաձեռնությամբ կազմակերպվել են առարկայական օլիմպիադաներ և այլն։

3. Բոլոր ստորաբաժանումների համատեղ ու փոխհամագործակցված աշխատանքի արդյունքում **ուսումնական գործընթացը** մասնաճյուղի 4 ֆակուլտետներում կազմակերպվել և անխափան իրականցվել է բակալավրի 12 առկա, 6 հեռակա և 1 հեռակա մագիստրոսական **կրթական ծրագրերով**, որոնց մեծ մասը մարզի աշխատաշուկայում պահանջված են (մասնավորապես, ԻԿՄ, Ֆինանսներ, Զբոսաշրջություն, ՌԼԳ, ՏՄՄ, Հոգեբանություն, ԴԿԱ), ընդ որում մասնաճյուղը մշտապես իրականացնում է աշխատաշուկայում պահանջվող մասնագիտությունների ուսումնասիրություն և վերանայում իր կրթական ծրագրերի ցանկը. վերջին տարիներին ներդրվել են բակալավրի 4 ծրագրեր (Հոգեբանություն, ՏՄՄ, ՌԼԳ, ԴԿԱ) և մագիստրոսի 2 ծրագիր («Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Գործարար վարչարարություն (կառավարում)»), որոնցից 1-ին ծրագիրը տվել է 2 շրջանավարտների խումբ, իսկ 2-րդի իրականացման լիցենզիան մասնաճյուղը ձեռք է բերել 2022-23 ուստարում և 2023թ.-ի հոկտեմբերին կազմակերպվել է ընդունելություն /մանրամասն տվյալները բաժին 1.1.3/:

Ըստ «ԵՊՀ ԻՄ-ում կրթական ծրագրերի մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգ»-ի յուրաքանչյուր ուսումնական տարում վերանայվում են բոլոր կրթական ծրագրերը։ Հաշվետու ուստարում վերանայվել են **11 առկա և 6 հեռակա** բակալավրի կրթական ծրագրեր և մագիստրոսի **1 ծրագիր** և այդ գործընթացի շրջանակներում.

- ✓ կրթական ծրագրերում վերանայվել է շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաների համախումբը,
- ✓ հաստատվել և ծրագրերում ներդրվել է բակալավրիատ և մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանուր կոմպետենցիաների կազմը,
- ✓ ծրագրերում ներդրվել են քննական մտածողության ու թիմային հետազոտական աշխատանքների իրականացման կարողությունների զարգացման մեթոդներ,
- ✓ ներդրվել են **«շարժունության պատուհաններ»**։

2022-23 ուստարում մոնիթորինգի են ենթարկվել բակալավրի **3 կրթական ծրագիր**, 2023-24 ուստարվա համար ընթացքի մեջ է բակալավրի 5 ծրագրի մոնիթորինգը։

Սկսվել են կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքները. հաստատվել են երեք կրթական ծրագրերի՝ «Զբոսաշրջություն». «Պատմություն» և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ինքնավերլուծություն իրականացնող

աշխատանքային խմբերը, կազմվել է այդ խմբերի համար վերապատրաստման ծրագիր:

4. Հաշվետու ուստարում ամբողջ **ուսումնական գործընթացը** հաջողությամբ, անխափան իրականացվել է հստակ պլանավորված և հաստատված ժամանակացույցերով: Ուսումնամեթոդական վարչությունում, ֆակուլտետներում ու ամբիոններում այն ղեկավարվել, կազմակերպվել և վերահսկվել է **Supervision YSU առցանց համակարգի** միջոցով, որը հնարավորություն է տալիս ուսանողների և դասախոսական կազմի համար ապահովվել է **Moodle առցանց ուսուցման** համակարգի հասանելիությունը. 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում առցանց ուսուցմամբ ռեսուրսներով ապահովված է առկա ուսուցման 590 և հեռակա ուսուցման 334 դասընթաց:

2022-23 ուստարուց մասնաճյուղում ուսումնական գործընթացը կազմակերպվում է ըստ նոր «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ի (հաստատված ԵՊՀ ԻՄ ԳԽ 30.04.2022թ.), որով 2022թ.-ի սեպտեմբերից ներդրվել է **գնահատման բազմագործոն նոր համակարգը** և բավականին արդյունավետ կիրառվում է:

5. Որակյալ կրթության ապահովման համար մասնաճյուղը ներգրավել է բարձրորակ **դասախոսական կազմ** (մասնաճյուղում այժմ դասավանդում է 175 դասախոս, այդ թվում գիտությունների 9-ը դոկտոր, 75 թեկնածու, ընդհանուր կազմի 48%-ը) և այդ հարցում մասնաճյուղին մշտապես աջակցում է Մայր բուհը՝ բարձրակարգ մասնագետներ ուղարկելով մասնաճյուղ: Դասախոսական աշխատանքներում համատեղությամբ և ժամավճարային կարգով ներգրավված են նաև ՀՀ այլ բուհերի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների բարձրակարգ մասնագետներ՝ /մանրամասն տվյալները բաժին 1.4.1/:

Հաստատվել է «Դասախոսական կազմի վերապատրաստման հետազոտահենք ծրագիր»-ը, դասախոսների համար 2022-23 ուստարում իրականացվել են շուրջ 22 վերապատրաստման դասընթացներ (այդ թվում «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում», «Ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ», «Հետազոտական աշխատանքների պլանավորում, իրականացում, ներկայացում» և այլն), դրանց մասնակցել են մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի ներկայացուցիչներ և աշխատակիցներ (ընդհանուր՝ **194**) : Նշենք, որ 2022-23 ուստարվա «Դասավանդման որակից և արդյունավետությունից ուսանողների բավարարվածության» առցանց հարցման արդյունքներով մասնաճյուղում միջին գնահատականը եղել է 4.7:

6. Քայլեր են կատարվել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտի ներդրման ուղղությամբ: 2022 և 2023թթ. գարնանային կիսամյակներում մասնաճյուղը հյուրընկալում է Փարիզի Ստեֆան Մալարմեի անվան քոլեջի պրոֆեսոր Վ.Նուեին, ով «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողների համար վարում է ֆրանսերենի բանավոր հաղորդակցման հմտությունները զարգացնող դասընթաց:

7.Մասնաճյուղը որոշ ձեռքբերումներ է գրանցել **գիտահետազոտական** գործունեության

ոլորտում: Մասնաճյուղի կողմից ներդրված խրախուսման մեխանիզմները և գիտական գործունեությանն աջակցման գործընթացներն ակտիվացրել են հիմնական դասախոսական կազմին /մանրամասն տվյալները բաժին 1.4.2/:

Ակտիվությանը նպաստել են.

✓բարելավված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ը (ԳԽ 18.02.2023թ.), որի կիրարկմամբ ավելացել է հրապարակված գիտահետազոտական աշխատանքների թիվը,

✓ԵՊՀ ԻՄ-ում 2022թ. մարտին և 2023թ.-ի ապրիլին կազմակերպված միջազգային գիտագործնական 2 համաժողովները,

✓2021թ.-ից իրականացվող ներքին դրամաշնորհային մրցույթները, որին 2022-23 ուստարում մասնակցել են 5 ծրագրեր:

2022-23 ուստարում մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի կողմից (66 դասախոս) հրատարակվել են 4 ուսումնամեթոդական ձեռնարկ և դասագիրք, 56 գիտական հոդված (նախորդ ուստարում՝ 42): Ընդորում, 2022թ.-ին 1 դասախոսին ընկնող գիտական հրատարակությունների ցուցանիշը կազմել է **0.91** (նախորդում՝ **0.74), այսինքն 66 դասախոս-60 գիտական հրատարակություն**:

8. Ավարտական աշխատանքների թեմաների արդիականացման, դրանց գիտական մակարդակի և կիրառական նշանակության բարձրացման համար մասնաճյուղի գրեթե բոլոր ամբիոններում **ավարտական աշխատանքների ղեկավարման համար** ներգրավվել են նաև գործատու կազմակերպությունների առաջատար մասնագետներ: Մասնավորապես, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնում ավարտական աշխատանքների ղեկավարման համար ներգրավվել են «LT Coding» ՍՊԸ տնօրենը, «Յեսոֆթ» ՍՊԸ տնօրենը, Իջևանում թվային անվտանգության կրթական և արձագանքման կենտրոնի ղեկավարը: Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում ավարտական աշխատանքների ղեկավարներ են ԿԲ-ի Դիլիջանի ուսումնագիտական կենտրոնի աառաջատար մասնագետները: «Դիզայն» կրթական ծրագրի ավարտական կուրսի ուսանողների մոտ ավարտական աշխատանքներ հագուստի մոդելավորումից և ինտերիերի դիզայնից ղեկավարում են Տերյան մշակութային կենտրոնի տնօրենը և դիզայները: Մեկ աշխատանքի ղեկավարումն իրականացնում է մարզի գլխավոր ճարտարապետը:

9. 2022-23 ուստարում մասնաճյուղում իրականացվել են ուսումնական և վարչական տարածքների արդիականացման, վերազինման, մասնաշենքերի վերանորոգման, օժանդակ տարածքների արդյունավետ օգտագործման և լսարանների արդիականացման 43 ծրագիր /մանրամասն տվյալները բաժին 1.5.1/:

10. Մասնաճյուղի ղեկավարության ուշադրության կենտրոնում են մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցների խնդիրներն ու կարիքները, ինչն ամրագրված է ռազմավարական ծրագրում և կազմում է նրա անբաժանելի մասը: Իր շահակիցների կարիքների բավարարման համար պարբերաբար տարբեր մեխանիզմներով **իրականացվել է** ներքին և արտաքին

շահակիցների կարիքների գնահատում, ուսումնասիրվել են նրանց խնդիրները, հավաքագրված տվյալների հիման վրա կազմվել են խնդիրների փաթեթներ, ապա դրանց լուծման ծրագրեր, խնդիրների և կարիքների լուծումների վերաբերյալ պատրաստվել են վերլուծություններ և զեկույցներ, արդյունքները պարբերաբար քննարկվել են տնօրենության նիստերում, ստորաբաժանումներին տրամադրվել են անհրաժեշտ խորհրդատվություններ և այլն:

Ընդհանրացնելով ռազմավարական մեկ տարվա գործունեությունը, ներկայացնելով մասնաճյուղի հիմնական ձեռքբերումները՝ անդրադառնանք նաև այդ ճանապարհին տարբեր ոլորտներում հանդիպած խնդիրներին.

- ✓ նվազել է ուսանողական համակազմը, ինչը պայմանավորված է անառողջ մրցակցության և շրջանավարտների ու ընդունվածների թվի տարբերության աճով, որը առավել արտահայտված է հեռակա ուսուցման համակարգում,
- ✓ ուսանողական համակազմի նվազումը անդրադառնում է մասնաճյուղի ֆինանսական մուտքերի վրա,
- ✓ իջել է ընդունելության գնահատականի շեմը և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգերի համար, ինչը վկայում է դիմորդների անբավարար պատրաստվածության մասին,
- ✓ համեմատաբար ցածր է հեռակա ուսուցման համակարգի ուսանողների առաջադիմության ցուցանիշը, ինչը ազդում է մասնաճյուղի ընդհանուր ցուցանիշի վրա,
- ✓ մասնաճյուղը վերջին տարիներին չունի օտարերկրյա դիմորդներ,
- ✓ տեղացի դասախոսական կադրերի քանակը սակավ է,
- ✓ ավագ սերնդի դասախոսների մի մասը չի տիրապետում ժամանակակից տեխնիկական միջոցներին,
- ✓ 2-րդ մասնաշենքի շենքային պայմանները բավարար չեն, որոնք բարելավելու համար պահաջվում է էական ֆինանսական ներդրումներ,
- ✓ լսարանային ֆոնդում առկա են խնդիրներ:

Առկա դժվարությունների և բացթողումների հաղթահարման համար անհրաժեշտ է մշակել նպատակային գործողությունների պլաններ, ապահովել ստորաբաժանումների արդյունավետ համագործակցություն, պարբերաբար կազմակերպել խորհրդատվական հանդիպում-քննարկումներ շահակիցների և ստորաբաժանումների միջև.

- ✓ ակտիվացնել աշխատանքը դպրոցների հետ ավելի ցածր դասարաններից, ավելացնել այցերի, նպատակային դասախոսությունների և մարքեթինգային գործողությունների քանակը,
- ✓ քայլեր ձեռք առնել սեփական ավագ դպրոցի հիմնադրման կամ մասնաճյուղում բնագիտական ուղղվածությամբ միջին մասնագիտական կրթական ծրագրի ներդրման համար,
- ✓ դիմորդների համար կազմակերպել նախապատրաստական դասընթացներ ընդունելության քննությունները հաղթահարելու նպատակով,
- ✓ մշակել ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման ծրագրեր՝ սկսելով կիրառական

արվեստի ուսանողների աշխատանքների առևտրայնացումից և հոգեբանական ծառայությունների առաջարկից,

- ✓ ուսանողների առաջադիմության բարձրացման համար ֆակուլտետներում կազմակերպել խորհրդատվական և լրացուցիչ մասնագիտական դասընթացներ, մշակել ցածր առաջադիմությամբ ուսանողների հետ աշխատելու գրաֆիկներ, այդ գործընթացում ներգրավել ֆակուլտետի լավ սովորող ուսանողներին,
- ✓ ստեղծել տրամադրող և մոտիվացնող կրթական միջավայր, այդ գործընթացներում ներգրավել ֆակուլտետների հաջողակ շրջանավարտներին,
- ✓ դասախոսական կազմի դասավանդման որակի բարելավման համար ընդլայնել և բազմազանեցնել մասնագիտական վերապատրաստման դասընթացների քանակը,
- ✓ ավելի շատ արտաքին շահակիցների, երիտասարդ հետազոտողների և գիտնականների ներգրավել ուսումնական գործընթացում,
- ✓ շարունակել ռեսուրսների թարմացման և վերանորոգման աշխատանքները մասնաշենքներում:

2. Ստորաբաժանման գործունեության վերաբերյալ ղեկավարի հաշվետվությունը

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.1.1. Ընդունելություն

Մասնաճյուղը վերջին տարիներին առկա ուսուցման համար ունի **դիմորդների և ընդունելության շեմը հաղթահարած դիմորդների կայուն ցուցանիշներ**՝ միջինում 215-265 դիմորդ և 160-200 ընդունված, ինչը պայմանավորված է մասնաճյուղի տեղակայմամբ, վարձավճարների մատչելիությամբ, մասնաճյուղի հեղինակությամբ և վարկանիշով: Պետք է նշել, որ մասնաճյուղի դիմորդների **93-99%-ը** Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են. գերակշռում են Իջևանի և Դիլիջանի տարածաշրջաններից դիմորդները:

Նույնը չի կարելի ասել հեռակա ուսուցման դիմորդների և ընդունվածների թվի մասին: Վերջին տարիներին հեռակա ուսուցման դիմորդների թիվը էապես նվազել է, որովհետև վերջին տարիներին փոխվել են ընդունելության պայմանները, ինչը բերել անառողջ մրցակցության տարածաշրջանի այլ հաստատությունների հետ: Մյուս խնդիրն էլ այն է, որ դիմորդների մեծամասնությունը չի հաղթահարում ընդունելության շեմը:

2022-2023 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքներով մասնաճյուղն ունեցել է առաջին հայտով **264 դիմորդ**, հեռակա ուսուցման ընդունելության արդյունքներով՝ **121 դիմորդ:**

2023-2024 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքներով մասնաճյուղն ունեցել է առաջին հայտով **223 դիմորդ**, հեռակա ուսուցման ընդունելության արդյունքներով՝ **105 դիմորդ**: Մնալով տարածաշրջանային բուհերի ցանկում առաջատարներից՝ այս ցուցանիշները նախորդ տարվա համեմատ մասնաճյուղի համար ցածր են:

Առկա ուսուցման ընդունելության 2022-2023 ուստարվա մրցույթի արդյունքներով մասնաճյուղ է ընդունվել **185 դիմորդ** (44-ը՝ անվճար, 141-ը՝ վճարովի ուսուցման համակարգ, ընդունելության քննությունները հաղթահարել է դիմորդների **70.3%-**ը), 2023-2024 ուստարվա ընդունելության 2 փուլերի մրցույթների արդյունքներով մասնաճյուղ է ընդունվել **161 դիմորդ** (45-ը՝ անվճար, 109+7=116-ը՝ վճարովի, 1-ին փուլի ընդունելության քննությունները հաղթահարել է մասնաճյուղի դիմորդների **71.3%-**ը):

Հեռակա ուսուցման ընդունելության 2022-2023 ուստարվա մրցույթի արդյունքներով մասնաճյուղ է ընդունվել **45 դիմորդ** (ընդհանուր դիմորդների **37.1%-ը**), 2023-2024 ուստարվա մրցույթի արդյունքներով՝ **32 դիմորդ** (ընդհանուր դիմորդների **30.4%-ը**):

«Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտության «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» հեռակա մագիստրոսական կրթական ծրագրով մասնաճյուղը 2022թ. ունեցել է **14 դիմորդ, 14 ընդունված**, 2023թ.-ին՝ **34 դիմորդ 32 ընդունված**, և գրանցվել է դիմորդների թվի էական աճ: Այս մագիստրոսական ծրագիրը մարզում բավականին պահանջված է, որովհետև այն հնարավորություն է տալիս մասնաճյուղի շրջանավարտներին (և ոչ միայն) ձեռք բերել մանկավարժի որակավորում և աշխատանք գտնել դպրոցներում, ծրագիրն արդեն տվել է շրջանավարտների 2 սերունդ (36 շրջանավարտ):

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և (կամ) «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտներից, համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու համար 2022-2023 ուստարում մասնաճյուղ է դիմել 44, ընդունվել է 29-ը, իսկ 2023-2024 ուստարում՝ դիմել է 33, ընդուվել է 11-ը:

Վերջին 5 տարվա տվյալներով ԵՊՀ ԻՄ դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության դիմորդների ընդհանուր համակազմում կայուն է՝ մոտավորապես **1.8%-2%,** ընդ որում, 2022թ.-ին կենտրոնացված ընդունելության ընդհանուր թվում այն կազմել է **1.94%:** Այն ընդհանուր առմամբ վատ ցուցանիշ չէ, եթե հաշվի առնենք, որ ՀՀ-ում դիմորդների ընդհանուր թիվն աճել է նախորդ տարվա համեմատ:

Ընդունելության և դիմորդների հետ կապված մասնաճյուղն ունի հետևյալ խնդիրները.

1. Իջել է ընդունելության գնահատականի շեմը, ինչը պայմանավորված է դպրոցներում ուսման ցածր որակի հետ, նաև, որ լավ սովորող աշակերտները մրցունակ են Երևանի բուհերում և ձգտում են դեպի Երևան, որտեղ ապագա կարիերայի հետ կապված հարցերն ավելի հեշտ լուծելի են:
2. Իջել է հեռակա ուսուցման համակարգ դիմողների թիվը, նաև շատ ցածր է հեռակա ուսուցման դիմորդների պատրաստվածության մակարդակը, ինչի արդյունքում, օրինակ 2022թ. 121 դիմորդներից ընդունվել է 43-ը (35.5 %):
3. Մասնաճյուղ ընդունվողների թիվը փոքր է ավարտող շրջանավարտների թվից, ինչը հանգեցրել է ուսանողների թվաքանակի նվազման, որի արդյունքում կրճատվել է վճարովի

ուսուցման ծառայություններից մասնաճյուղի եկամուտները:

4. Ուսանողների կեցության ապահովման խնդրի արդյունքում Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջանների աշակերտները գերադասում են գնալ Երևան: Մասնաճյուղը չունի ուսանողական հանրակացարան:

Ինչ է արել մասնաճյուղը ավելի շատ թվով դիմորդներ ներգրավելու ուղղությամբ և ինչպես է պլանավորում հաղթահարել դիմորդների հետ կապված խնդիրները:

1. Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում իրականացնում է ակտիվ գովազդարշավ, ակտիվացնում է կապը դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ նրանց հետ կնքելով համագործակցության պայմանագրեր,
2. Դիմորդների նոր հոսք ապահովելու համար մասնաճյուղն ուսումնասիրում է նոր, պահանջված կրթական ծրագրերի ներդրման հնարավորությունները. օրինակ գործընթացներ են ձեռնարկվում ԲԳՖ-ում «Ռադիոֆիզիկա» կամ «Ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագիրը ներդնելու ուղղությամբ: Այն հնարավորություն կտա նաև ավելի արդյունավետ օգտագործելու երկու ֆակուլտետների դասախոսական կազմերի ներուժը:
3. Լիցենզավորվել և 2023թ. ընդունելություն է կատարվել նոր մագիստրոսական ծրագրով՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)»:
4. Ուսանողներին կեցության ապահովման հարցում աջակցելու համար մասնաճյուղը հավաքել է տեղեկատվություն Իջևան քաղաքում վարձով տրվող բնակարանների վերաբերյալ, որը տրամադրվել է դեկանատներին:
5. Պլանավորվել է իրականացնել նախապատրաստական դասընթացներ (մասնավորապես հեռակա ուսուցման դիմորդների համար), ինչի համար հաստատվել է համապատասխան կարգ, 2023թ. սեպտեմբերին տրվել է հայտարարություն ընդունելության առարկաներից մասնաճյուղում նախապատրաստական դասընթացներ իրականացնելու մասին:
6. Ընդլայնում է գովազդարշավը՝ ընդգրկելով նաև այլ մարզեր՝ նոր դիմորդներ ներգրավելու համար:

1.1.2. Դիմորդների մասնագիտական կողմնորոշում

Մասնագիտական կողմնորոշման գործում Մասնաճյուղն ունի բավականին ձեռքբերումներ: Այդ գործընթացը համապատասխան պլանով և հաստատված ժամանակացույցով հաջողությամբ իրականացնում է ՊԿՇՀ բաժինը:

1. ՊԿՇՀ բաժինը հաշվետու ուստարում դիմորդների հավաքագրման նպատակով նախապես մշակված ժամանակացույցով Տավուշի և Գեղարքունիքի մարզերի դպրոցներում իրականացրել են **հանդիպումների շարք**. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել է **46 հանդիպում**, իսկ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում **34 հանդիպում**:

2. 2022-2023 ուստարվա ընթացքում կազմակերպվել են մարզի դպրոցների (Իջևանի ավագ

դպոցի, թիվ 3, 4, 5 հիմնական դպրոցների, Աչաջուր գյուղի, Ծաղկավանի միջնակարգ դպրոցների) աշակերտների մեկ տասնյակ **ճանաչողական այցեր** մասնաճյուղ և նաև ֆակուլտետներ: Մասնաճյուղ են այցելել նաև «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 8-10-րդ դասարանի աշակերտները և Իջևանի Պ.Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի ավարտական կուրսի ուսանողները:

3. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ՊԿՇՀ բաժնի նախաձեռնությամբ մասնաճյուղի դասախոսները 7 **ակնարկային դասախոսություններով** հանդես են եկել մարզի տարբեր դպրոցներում.

✓**Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի** դասախոս Հ.Ալեքյանը հանդիպում է ունեցել Իջևանի ավագ դպրոցի 11-րդ դասարանի ֆիզիկամաթեմատիկական ուղվածությամբ սովորող աշակերտների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահի մամլո հաղորդագրությունը ներկացնող տեսաշարը: Երեխաներին ներկայացվել է տեսական և գործառնական հիմնական մտածողության ուղղությունները, որոնցից օգտվում է կենտրոնական բանկը՝ տնտեսական իրադարձությունները գնահատելիս և մեկնաբանելիս: Մեկ ամբողջական ներկայացման մեջ ամփոփվել է կիրառվելիք գիտական մեթոդը՝ տնտեսական մոդելներն ու տեսությունը, հասարակության հետ ունեցած կապը:

✓ **Օտար լեզուների անբիոնի** ասիստենտ Մ.Կարապետյանը և դասախոս Դ.Մարգարյանը Սևքարի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտների համար հանդես են եկել «Ֆրանսերենը և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը» թեմայով: Աշակերտներին ներկայացվել է Հայաստանի սերտ համագործակցությունը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ, որն արտահայտվում է մի շարք ծրագրերի իրականացմամբ: Մասնավորապես քննարկվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ գործընկերային հարաբերությունների զարգացումը և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով սովորող ուսանողներին ընձեռնվող հնարավորությունները:

✓ **Օտար լեզուների անբիոնի** ասիստենտ Ա.Մարդանյանը և դասախոս Ա.Հովհաննիսյանը «Բանավոր խոսքի ըմբռնումը» թեմայով ակնարկային դասախոսությամբ հանդես են եկել Իջևանի վարժարանում: Ունկնդիրները վարժարանի 10-12-րդ դասարանների «Ֆրանսերեն լեզու» դասընթացում ընդգրկված աշակերտներն էին: Դասախոսները ներկայացրել են բանավոր խոսքի ըմբռնման առանձնահատկությունները և կարևորությունը: Իրականացվել է գործնական աշխատանք՝ ընդհանրացնելով նախկինում ձեռք բերված գիտելիքները «Գնումներ» և «Աշակերտի առօրյան» թեմաներով՝ հաշվի առնելով, որ աշակերտները հանդես են գալիս լեզվի իմացության տարբեր մակարդակներում:

✓ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում **Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ**.մ.գ.թ. Ա.Մարգարյանը դասախոսություններ է կարդացել Այգեհովիտի միջնակարգ դպրոցում «Էլեկտրամագնիսական ալիքներ» և Թեղուտի միջնակարգ դպրոցում «Նյութական կետի դինամիկա» թեմաներով, Ազատամուտի միջնակարգ դպրոցում կատարվել է լաբորատոր փորձ «Նյութի ջերմահաղորդականության որոշումը»:

✓ **Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ**, բ.գ.թ. Վ.Աղաբաբյանը Կոթիի

միջնակարգ դպրոցում դասախոսություն է կարդացել «Համո Սահյանի կյանքն ու գործունեությունը» թեմայով:

4. Դիմորդների մասնագիտական կողմնորոշման հարցում իրենց կարևոր դերն ունեն «ԵՊՀ օլիմպիադա-2023»-ի շրջանակներում մասնաճյուղում իրականացված **առարկայական օլիմպիադաները**, որին մասնակցել են մարզի 33 դպրոցների 226 աշակերտներ և գրանցել հաջողություններ: Մասնակիցներից 2-րդ փուլ է անցել 36 աշակերտ՝ 8 առարկայից (մասնակիցների՝ գրեթե 16%-ը): Երևանի պետական համալսարանում կազմակերպված II փուլի արդյունքներով մեկ աշակերտ արժանացել է I կարգի դիպլոմի (հայոց լեզու և գրականություն առարկայից), երկու աշակերտ՝ II կարգի դիպլոմի (հայ ժողովրդի պատմություն և ֆիզիկա առարկաներից), 9 աշակերտ գովասանագրի՝ 5 առարկայից:

5. Հաշվետու ժամանակահատվածում ՊԿԾՀ բաժնի և Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ Իջևանի Գ.Անանյանի անվան ավագ դպրոցում և Իջևանի վարժարանում **կազմակերպել են «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը**, որին մասնակցել են դպրոցների 11-րդ դասարանի աշակերտները:

6. Մասնաճյուղի գործունեության և իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ գովազդի շրջանակներում մշակվել և մասնաճյուղի պաշտոնական կայքում տեղադրվել է «Դիմորդ-2023» ուղեցույցը, Արաքս հրատարակչությանը տրամադրվել է մասնաճյուղի ընդունելության վերաբերյալ տեղեկատվություն «Հայաստանի բուհերի դիմորդների համար տեղեկատու»-ում հրապարակելու համար:

Մասնաճյուղը հավաքագրել է տեղեկատվություն ՀՀ տարբեր բուհեր դիմած Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտների վերաբերյալ: Այդ տեղեկատվությունը հնարավորություն է տալիս պարզելու, թե ինչ նախասիրություններ ունեն մարզից դուրս գնացող դիմորդները և այդ կրթական ծրագրերից որոնք կարող է իրականացնել մասնաճյուղը: Նշենք, որ այդ դիմորդները հիմնականում դիմել են բժշկական համալսարան, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետ և տեխնիկական բուհեր: Սրանք այնպիսի մասնագիտություններ են, որոնց ուղղությամբ մասնաճյուղը կրթական ծրագրեր չի իրականացնում և առայժմ չունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու հնարավորություն, ինչը պայմանավորված է շենքային պայմաններով, լաբորատոր ռեսուրսներով և համապատասխան դասախոսական կազմ ներգրավելու դժվարություններով: Նման ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ են ֆինանսական մեծ ներդրումներ:

1.1.3. Կրթական ծրագրեր

Հաշվետու ուստարում մասնաճյուղը կրթական ծառայություններ է մատուցել առկա ուսուցման 11 մասնագիտությունների բակալավրի 12 կրթական ծրագրերով, հեռակա ուսուցման 6 մասնագիտությունների 6 կրթական ծրագրերով և մագիստրոսական հեռակա մեկ կրթական ծրագրով:

Իրականացվող բակալավրի 12 կրթական ծրագրերից 6-ը մարզի աշխատաշուկայում

պահանջված կրթական ծրագրեր են (ԻԿՄ, Ֆինանսներ, Զբոսաշրջություն, ՌԼԳ, ՏՄՄ, Հոգեբանություն), իսկ արվեստի 2 կրթական ծրագրերի (Դիզայն, Դեկորատիվ-կիրառական արվեստ) շրջանավարտներն իրենք են ստեղծում աշխատաշուկա և կարողանում են սեփական գործ սկսել:

Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը, ընդհանուր առմամբ, տարածաշրջանում պահանջված է դիմորդների կողմից, իսկ ծրագրի շրջանավարտները պահանջված են աշխատաշուկայում, քանի որ մարզում վերջին տարիներին ավելացել է SS ոլորտի կազմակերպությունների թիվը, որոնց աշխատակազմը համալրվում է հիմնականում ֆակուլտետի շրջանավարտներով, նույնիսկ ուսանողներով: Ծրագրի 2022-23 ուստարվա առկա ուսուցման 19 շրջանավարտներից **10-ը** ավարտելու պահին արդեն աշխատում էր իր մասնագիտությամբ: Ծրագրի պահանջվածությունն էլ ավելի բարձրացնելու համար այն վերանայվել է և այն բացի հիմնական մասնագիտական կառուցամասից ներառում է նաև **3 հատուկ մասնագիտական** կառուցամասեր 48 կրեդիտ բեռնվածությամբ, որոնք ապահովելու են 3 նեղ մասնագիտական ուղղություններ՝ ծրագրավորում, ռոբոտաշինություն և մեխատրոնիկա, թվային անվտանգություն: 2021-22 ուստարում ծրագիրը ենթարկվել է մոնիթորինգի:

Տնտեսագիտության ֆակուլտետի 2 կրթական ծրագրերը՝ «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» և «Զբոսաշրջություն», դիմորդների համար պահանջված ծրագրեր են: 2022-23 ուստարում «Ֆինանսներ» առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրով դիմել է 49 դիմորդ, որը վերջին տարիների համար բավականին բարձր ցուցանիշ է: Նրանցից ընդունելության շեմը հաթահարել է 32-ը (65%), ընդ որում, ընդունելության գնահատականի շեմը անվճար ուսուցման համար եղել է **33.25 միավորը**, իսկ վճարովի ուսուցման համար՝ 15.5: «Զբոսաշրջություն» կրթական ծրագիրը հաշվետու ուստարում ունեցել է 25 դիմորդ, որից ընդուվել են 15-ը (60%):

«Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանը մշակվել և պարբերաբար վերանայվում է Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի առաջարկներին համապատասխան՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ: Նշենք, որ մարզի ֆինանսական բոլոր կազմակերպություններում հիմնականում աշխատում են այս ծրագրի շրջանավարտները:

Նույնը կարող ենք նշել «Զբոսաշրջություն» ծրագրի համար. մարզի զբոսաշրջային և հյուրանոցային բոլոր կազմակերպություններում հաջողությամբ աշխատում են ծրագրի շրջանավարտները:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետում իրականացվում են 7 կրթական ծրագրեր (պատմություն, ՀԼԳ, ԱԼԳ, ՖԼԳ, ՏՄՄ, ՌԼԳ, Հոգեբանություն), որոնցից վերջին 3-ը ներդրվել են վերջին 5-6 տարիներին: Վերջին 2 ուստարիներին ֆակուլտետի 7 ծրագրերով դիմորդների թիվն էապես ավելացել է: 2022թ.-ին հումանիտար մասնագիտություններով առկա ուսուցմամբ դիմել է 143 դիմորդ, հեռակա ուսուցմամբ՝ 69-ը, նրանցից ընդունելության շեմը հաղթահարել են առկա ուսուցմամբ 97-ը (67.8%), հեռակա ուսուցմամբ՝ 24-ը (34.8%): Ֆակուլտետի 2 կրթական ծրագրեր՝ ՌԼԳ և ՀԼԳ անցել են մոնիթորինգ:

Կիրառական արվեստի ֆակուլտետի «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերը բավականին պահանջված են տարածաշրջանում և այդ ծրագրերով

դիմորդների թիվը վերջին երկու տարիներին ավելացել է: Այդ կրթական ծրագրերով ուսումնառությունն ապահովում և խթանում է ինչպես մարզում, այնպես էլ նրա սահմաններից դուրս ժողովրդական հին և նոր արհեստների զարգացումը և տարածումը, նպաստում է դրանց պահպանմանը: Վերջին տարիներին մեծ աշխատանքներ են իրականացվել գործվածքի, մետաղների, փայտի գեղարվեստական մշակման, խեցեգործության, ապակենկարչության, զարդարվեստի, քանդակի, ինտերիերի և էքստերիերի դիզայնի, հագուստի նախագծման և մոդելավորման ուղղություններով: Ֆակուլտետի դասախոսները և ուսանողները ակտիվ ստեղծագործում են, ինչի վկայությունն են հանրապետության տարբեր քաղաքներում, Իջևանի քաղաքային պատկերասրահում և մասնաճյուղում հաճախ կազմակերպվող ցուցահանդեսները, ցուցահանդես-վաճառքները, նրանց ստեղծագործությունները դառնում են մասնաճյուղի պատվավոր հյուրերի համար գեղեցիկ նվերներ: Հաշվետու ուստարում ֆակուլտետի ուսանողները և դասախոսները մասնակցել են **7 ցուցահանդեսների**, **2 դասախոսներ** մասնակցել են Իջևանի համայնքապետարանի և «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի EU4Culture-ի «Մենք ենք մեր սարերը» ծրագրի դրամաշնորհային մրցույթի և ճանաչվել հաղթող: Տարբեր լրատվամիջոցներ պարբերաբար անդրադառնում են ֆակուլտետի ուսանողների և դասախոսների մասնագիտական գործունեությանն ու ձեռքբերումներին:

Նշենք, որ ԴԿԱ կրթական ծրագրի 2023թ. 8 շրջանավարտներից 5-ը ավարտելու պահին աշխատում էր, այդ թվում՝ 4-ն իր մասնագիտությամբ:

Մասնաճյուղը մշտապես իրականացնում է աշխատաշուկայում պահանջվող մասնագիտությունների ուսումնասիրություն և վերանայում իր կրթական ծրագրերի ցանկը: Վերջին տարիներին ներդրվել են բակալավրի 4 ծրագրեր (Հոգեբանություն, ՏՄՄ, ՌԼԳ, ԴԿԱ) և մագիստրոսի 2 ծրագիր («Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Գործարար վարչարարություն (կառավարում)»):

Իրեն արդարացնում է 2021թ.-ից ներդրված հեռակա մագիստրոսական «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս մասնաճյուղի շրջանավարտներին (նաև այլ բուհերի շրջանավարտներին) ձեռք բերել մանկավարժի որակավորում և աշխատանք գտնել դպրոցներում, ծրագիրն արդեն տվել է շրջանավարտների 2 սերունդ (36 շրջանավարտ):

Հասարակության շրջանում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում 2023 թվականին մասնաճյուղը ձեռք է բերել «Գործարար վարչարարություն (կառավարում)» **նոր հեռակա մագիստրոսական կրթական ծրագիր** իրականացնելու լիցենզիա, որով մասնաճյուղը 2023թ.-ի հոկտեմբերին արդեն կազմակերպել է ընդունելություն՝ ունենալով ընդունվածների բավարար թվաքանակ՝ 13 ուսանող:

Աշխատաշուկայի միտումների և գործատուների կարծիքների ուսումնասիրությունների արդյունքները ներառվում են գործող ծրագրերում՝ դրանց վերանայման ժամանակ՝ իրենց արտահայտումը ստանալով ծրագրի վերջնարդյունքներում, մասնագիտական դասընթացների բովանդակությունում, պրակտիկաների ծրագրերում և այլն:

Ըստ «ԵՊՀ ԻՄ-ում կրթական ծրագրերի մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգ»-ի յուրաքանչյուր ուսումնական տարում վերանայվում են բոլոր կրթական ծրագրերը: Հաշվետու

ուստարում **վերանայվել են 11 առկա և 6 հեռակա** բակալավրի կրթական ծրագրեր և մագիստրոսի **1 ծրագիր** և այդ գործընթացի շրջանակներում.

✓ կրթական ծրագրերում վերանայվել է շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաների համախումբը,

✓ հաստատվել և ծրագրերում ներդրվել է բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանուր կոմպետենցիաների կազմը (հաստատված՝ ԳԽ, 26.11.2022թ.),

✓ ծրագրերում ներդրվել են քննական մտածողության ու թիմային հետազոտական աշխատանքների իրականացման կարողությունների զարգացմանն ուղղված դասավանդման և ուսումնառության մեթոդներ,

✓ ներդրվել են **«շարժունության պատուհաններ»** (ըստ «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ի, 30.04.2022թ.)։

2022-23 ուստարում իրականացվել է բակալավրի **3 կրթական ծրագրերի** (ՀԼԳ, Զբոսաշրջություն, Դիզայն) մոնիթորինգը, 2023-24 ուստարվա համար ընթացքի մեջ է բակալավրի 5 ծրագրերի մոնիթորինգը։

Սկսվել են կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքները. հաստատվել են երեք կրթական ծրագրերի՝ «Զբոսաշրջություն». «Պատմություն» և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ինքնավերլուծություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերը (Տնօրենի հրամաններ 51/40, 47/7, 47/6), կազմվել է այդ խմբերի համար վերապատրաստման ծրագիր։

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար մասնաճյուղում դեռևս 2014թ.-ից ներդրված է դասընթացների պլանավորման **«Դասընթացի փաթեթ (պորտֆոլիո)» մոդելը,** որի միջոցով դասախոսը ներկայացնում է դասընթացի նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, գնահատման մեթոդներն ու չափանիշները, բովանդակությունը (յուրաքանչյուր թեմայի համար նշելով վերջնարդյունքները, գործնական և ինքնուրույն աշխատանքների թեմաները), թեմատիկ և օրացուցային պլանները, գնահատման գործիքները և այլն։ 2023-24 ուստարվա 1-ին կիսամյակի **252 դասընթացների 90%-ի** համար ամբիոններում առկա են պորտֆոլիոների թղթային կամ էլեկտրոնային տարբերակները։

Կրթական ծրագրերի իրականցման հետ կապված արձանագրվել են հետևյալ խնդիրները.

1. Որոշ կրթական ծրագրերի համար խնդիր կա շրջանավարտների զբաղվածության հետ կապված, մարզի աշխատաշուկայում առանձնապես շատ չեն հումանիտար ուղղվածության աշխատատեղերը, ինչն անդրադառնում է նաև դիմորդների թվի վրա։ Կտրուկ նվազել է ՀԼԳ մասնագիտության ընդունելությունը։ 2022թ. «Պատմություն» կրթական ծրագրով դիմորդերի թիվը էապես ավելացել էր՝ առկա ուսուցմամբ 31 դիմորդ, որոնցից ընդունվել է 18-ը (58%), հեռակա ուսուցմամբ 26 դիմորդ, որոնցից ընդունվել է 8-ը։ Այստեղ պետք է նշել, որ մարզի հասարակությունն ավելի գերադասում է հումանիտար կրթությունը, և այդ պատճառով մասնաճյուղը շարունակում է իրականացնել այդ ծրագրերով ընդունելություն։
2. **ԱԼԳ-ն** պահանջված կրթական ծրագիր է, այն ունի դիմորդների և ընդունվածների բարձր քանակ և նաև ընդունելության բարձր ցուցանիշներ. հաշվետու ուստարում այդ ծրագրով դիմել է 32 դիմորդ, ընդունվել է 29-ը (91%), ընդ որում հիմնական փուլով ընդունելության գնահատականի

շեմը անվաճար ուսուցման համար եղել է 34.75 միավորը, իսկ վճարովի ուսուցման համար՝ 19.25-ը: Պետքէ նշել, որ այս ծրագրի ուսանողների ուսումնառության արդյունքները նույնպես բարձր են. 2022-23 ուստարվա 21 շրջանավարտներից 5-ն ավարտել է գերազանցության դիպլոմով: Չնայած այս ամենին, մարզում համապատասխան աշխատատեղեր չկան:

3. **ՖԼԳ**-ում դիմորդների և ընդունվածների թիվը շատ ցածր է, սակայն ծրագիրն իրականացվում է հաշվի առնելով այն փաստը, որ մասնաճյուղն ակտիվ համագործակցում է Ֆրանսիայի Վալանս քաղաքի հետ, ուսանողները հաղորդակցման կարողությունները զարգացնելու համար այցելում են Վալանսի բուհեր, քոլեջներ, դպրոցներ և ծրագրի ուսանողները ֆինանսավորվում «Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» միության կողմից:

1.1.4. Ուսման առաջադիմություն

2022-2023 ուստարում մասնաճյուղում գրանցված առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը առկա ուսուցման համար կազմել է **78.2%** (նախորդ ուստարում՝ 71.9%), հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ **31.2%,** մագիստրատուրայում՝ **92.6%:** Նշենք, որ առկա ուսուցման առաջադիմության ցուցանիշն ամենաբարձրն է վերջին 5 տարիների համար, և այդ ցուցանիշը բարձրացել է նաև բոլոր ֆակուլտետների համար. հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ **89.6% (** նախորդ ուստարում 78.9%), տնտեսագիտության ֆակուլտետ՝ **78.3%** (նախորդ ուստարում՝ 52.2%), բնական գիտությունների ֆակուլտետ՝ **64.5%** (նախորդ ուստարում՝ 85.4%), կիրառական արվեստի ֆակուլտետ՝ **80.2%** (նախորդ ուստարում՝ 71.1%):

Միայն բնական գիտությունների ֆակուլտետում առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը նվազել է, բայց դա միայն նախորդ ուստարվա համեմատ, մնացած ուստարիների համեմատ այն բաձրացել է: 2022-2023 ուստարում ֆակուլտետի ԻԿՄ կրթական ծրագրի առկա ուսուցման համար ուսման առաջադիմության միջինը կազմել է **67.6%** (նախորդ ուստարում՝ 64.6%), իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ **23.2%:**

2022-23 ուստարում առկա ուսուցման բակալավրիատի 632 ուսանողից 201-ը (**31.8%-ը**) գրանցել է 85%-ից բարձր ՄՈԳ, 324 ուսանող (**51.3%**) բարելավել է ՄՈԳ-ը, որը նախորդ ուստարվա համեմատ բարձր ցուցանիշ է, իսկ ՄՈԳ-ը իջեցրած ուսանողների բաժնեմասը կազմել է **20.6%** (130 ուսանող):

2022-23 ուստարվա 2-րդ կիսամյակի արդյունքներով առկա ուսուցման բակալավրի 641 ուսանողներից **103-ը** (**16.1%**) գրանցել է գերազանց առաջադիմություն: Այստեղ, կարելի է առանձնահատուկ նշել ԻԿՄ կրթական ծրագրի ձեռքբերումը՝ 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակում ունեցել է գերազանց առաջադիմությամբ 13, 2-րդ կիսամյակում՝ 12 ուսանողներ, որը ֆակուլտետի համար նոր և կարևոր ցուցանիշ է:

Նույն ուստարվա առկա ուսուցման 129 շրջանավարտներից **36-ը (28%)** մասնաճյուղն ավարտել է գերազանցության դիպլոմով, որը նույնպես նախորդ տարիների համեմատ (23%, 16%, 18%, 14%) շատ բարձր է:

Վերջին տարիների համար բոլոր այս ցուցանիշները բարելավված են:

Ապահովվել է ուսման լավ առաջադիմություն, և այդ հաջողությունը կարող ենք վերագրել տարիների ընթացքում մասնաճյուղում կայուն ներդրված և հետևողականորեն իրականացվող գործընթացներով, ինչպիսիք են.

- ✓ դասախոսների կողմից դասավանդման, ուսումնառության և գնահատման նոր մեթոդների կիրառումը,
- ✓ արդյունավետ իրականացվող մասնագիտական պրակտիկաները և նրանց անընդհատ ընդլայնվող ցանկը,
- ✓ պարբերաբար վերանայվող կրթական ծրագրերը, որոնցում մասնագիտական դասընթացների համար ավելացվել են գործնական դասընթացների ժամաքանակները և դասընթացների բովանդակությունն ուղղորդվել է պրակտիկ գիտելիքների և կարողությունների ձևավորմանը,
- ✓ նաև 2022-23 ուստարուց ներդրված **գնահատման նոր բազմագործոն համակարգն** իր բաղադրիչներով և դրական գնահատականի **բարձրացված շեմով**, որոնք ուսանողին ուղղորդում են ընթացքում սովորելու հաշվին հասնել արդյունքի:

Պետք է կարևորել նաև ուսանողների մոտիվացիայի բարձրացումը, որովհետև նրանց մի մասը ուսմանը զուգահեռ կարողանում է նաև աշխատել մասնագիտությամբ, այդ օրինակները շատ են ԻԿՄ, Զբոսաշրջություն, Ֆինանսներ, ԴԿԱ կրթական ծրագրերի համար:

Օրինակ, վերջին տարիներին ԻԿՄ կրթական ծրագրի ուսանողների մի մասը ուսմանը զուգահեռ որպես ծրագրավորող աշխատում է Իջևան քաղաքում գործող ծրագրավորման ընկերություններում՝ «LT Coding» ՍՊԸ, «Vectre» ՓԲԸ, «Digital Wave» ընկերություն, «Յեսոֆթ» ՍՊԸ, Իջևանում թվային անվտանգության կրթական և արձագանքման կենտրոն, նաև աշխատում են մարզում գործող «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում որպես խմբավարներ:

Ուսման առաջադիմության հարցում մասնաճյուղը **խնդիր ունի** առաջին հերթին հեռակա ուսուցման համակարգում, որի ցուցանիշները բոլոր կրթական ծրագրերի համար ցածր են, և այստեղ իրենց ազդեցությունն ունեն ուսանողների բացակայությունները, բազային գիտելիքների ցածր մակարդակը, զբաղվածությունը աշխատանով և այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Ուսման առաջադիմության հետ կապված **խնդիրները լուծելու համար** անհրաժեշտ է նորից վերանայել դասավանդման և ուսումնառության մեթոդները, նոր մոտեցումներ ցուցաբերել ուսանող-դասախոս համագործակցության մեջ՝ առաջնայնությունը տալով ուսանողի հետ պրակտիկ աշխատելու և ուսանողին մոտիվացնելու ձևերին ու մոտեցումներին, առաջացնել հետաքրքրություն և մոտիվացիա, նաև կարելի է ուսման վարձի զեղչի տոկոսադրույքները դիֆերենցել ըստ ՄՈԳ-երի:

Առանձին մոտեցումներ պետք է մշակվեն հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների համար՝ ավելացնելով լրացուցիչ դասընթացների և խորհրդատվությունների քանակը:

1.1.5. Ուսանողների հոսունություն

Մասնաճյուղի ՈՒԳԿՎ բաժինը հաշվետու ժամանակահատվածի կտրվածքով վերլուծություն է իրականացրել ուսանողների հոսունության վերաբերյալ:

2022-2023 ուստարում մասնաճյուղից հեռացվել է 71 ուսանող, վերականգնվել է 21-ը, այլ բուհերից մասնաճյուղ է տեղափոխվել 7 ուսանող, այլ բուհ է տեղափոխվել 1 ուսանող:

2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի տվյալներով հեռացվել է 12 ուսանող, վերականգնվել է 24 ուսանող, այլ բուհերից մասնաճյուղ է տեղափոխվել 27 ուսանող, այլ բուհ է տեղափոխվել 2 ուսանող:

Ուսանողները մասնաճյուղից հեռացվել են հիմնականում ուսման անբավարար առաջադիմության և վարձը չվճարելու պատճառով:

Այլ բուհերից տեղափոխության պատճառ են հանդիսանում ԵՊՀ բարձր վարկանիշը մասնաճյուղի կրթական ծրագրերի հարմար վարձավճարները, տարածաշրջանում մասնաճյուղի հեղինակությունը, բնակության վայրը փոփոխությունը և այլն:

Հեռացումների թիվը նվազեցնելու նպատակով կարելի է.

- ✓ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար ավելացնել դասախոսական խորհրդատվությունները,
- ✓ օգտագործել լավագույն ուսանողների ուժը՝ նրանց աջակցելու և օգնելու համար:

1.1.8. Կրթաթոշակներ

Ուսման առաջադիմության վրա իրենց տեսանելի ազդեցությունն են թողնում պետական ֆինանսավորմամբ **ուսանողական կրթաթոշակները,** որոնք տրվում են բարձր առաջադիմությամբ ուսանողներին և բարձրացնում են նրանց մոտիվացիան՝ ստեղծելով մրցակցություն և ձգտում ավելի բարձր արդյունքների հասնելու համար:

Բացի պետական կրթաթոշակներից մասնաճյուղում ըստ «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ի ուսանողներին տրվում են նաև անվանական կրթաթոշակներ: Մասնաճյուղում սահմանված է.

✓ 10 ներքին անվանական կրթաթոշակ, որոնցից 2-ը ներմուծվել են 2022թ.-ին, դրանք են՝ «Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակը, Արցախյան 44-օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների անվան կրթաթոշակը,

✓ 5 արտաքին կրթաթոշակ, որոնցից 1-ը ներմուծվել է 2022թ.-ին՝ «Իջևան» անվանական կրթաթոշակը, որը սահմանել է Իջևանի համայնքապետարանը:

Կան հիմնադրամներ և կազմակերպություններ, որոնք կրթաթոշակի տեսքով փոխհատուցում են վճարովի համակարգում սովորող ուսանողների **վարձավճարները** (ՀՕՖ, Հովնանյան հիմնադրամ, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, «Հայ մանուկներ» բարեգործական

հիմնադրամ, ՏաՀույս Տավուշի առաջնորդարան), ընդ որում փոխհատուցումն իրականացվում է ուսանողի ՄՈԳ-ի հիման վրա, ինչը խթան է հանդիսանում վճարովի համակարգում սովորող ուսանողների առաջադիմության բարձրացման համար:

2022-23 ուստարվա 2 կիսամյակներում մասնաճյուղում տրվել է պետական ֆինանսավորմամբ 260 կրթաթոշակ, ներքին՝ 22 և արտաքին 5 անվանական կրթաթոշակներ:

Ուսանողների վարձավճարները փոխհատուցում են նաև անհատներ, դրանք տրամադրելով կոնկրետ ուսանողների, օրինակ Գոշ համայնքի ուսանողների վարձավճարները փոխհատուցում է իրենց համագյուղացին, Կայան ավանի դպրոցի շրջանավարտ-ուսանողներինը՝ դպրոցի բարերարը, մասնաճյուղի դասախոսական կազմի ներկայացուցիչներ և այլն:

Մասնաճյուղում սահմանված են հետևյալ անվանական կրթաթոշակները, որոնք հատկացվում են ուսման բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ունեցող ուսանողներին .

- ✓ «Դավիթ Անհաղթ», «Մխիթար Գոշ», «Գրիգոր Նարեկացի» և «Շառլ Ազնավուր» - հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողների համար,
- ✓ «Շավարշ Մարգարյան» և «Սահակ Ձորափորեցի» - տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների համար,
- ✓ «Համլետ Կարայան» - բնական գիտությունների ֆակուլտետի ուսանողների համար,
- ✓ «Սպարտակ Սարգսյան» - կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների համար:

Բացի ֆակուլտետային կրթաթոշակներից, լավագույն ուսանողները ներկայացվում են նաև ներբուհական մրցութային կրթաթոշակների՝ «ԵՊՀ», «Արտակ Ցուցուլյանի անվան» և «44-օրյա պատերազմում անմահացած ուսանողների անվան» և Պաշտպանության նախարարության կողմից տրամադրվող «Մոնթե Մելքոնյան» և «Վազգեն Սարգսյան» կրթաթոշակների, նաև Իջևանի համայնքապետարանի կողմից տրամադրած «Իջևան» կրթաթոշակի:

Ըստ «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»-ի ուսանողներն օգտվում են նաև տարբեր նպաստներից՝ վարձավճարի լրիվ և մասնակի փոխհատուցման տեսքով:

2022-23 ուստարվա 2-րդ կիսամյակի արդյունքներով 2023-24 ուստարվա 1-ին կիսամյակում նշանակվել է.

- ✓ ուսման վարձի լրիվ փոխհատուցում առկա ուսուցման համակարգի 143 ուսանողի,
- ✓ ուսման վարձավճարի 100% փոխհատուցում առկա ուսուցման համակարգի 13 ուսանողի,
- ✓ ուսման վարձի մասնակի փոխհատուցում առկա ուսոցման համակարգի 61 ուսանողի (այդ թվում՝ 30-ը տնօրենի հրամանով, 31-ը բուհի մանդատային հանձնաժողովի ներկայացմամբ),
- ✓ ուսման վարձի մասնակի փոխհատուցում հեռակա ուսոցման համակարգի 77 ուսանողի (այդ թվում՝ 37-ը տնօրենի հրամանով, 40-ը մանդատային հանձնաժողովի ներկայացմամբ):

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի 71 ուսանող մանդատային հանձնաժողովի կողմից ներկայացվել է վարձավճարի որոշակի տոկոսով փոխհատուցման (որից 1-ական ուսանող՝ 70%, 60% և 40% զեղչերի, 25 ուսանող՝ 50%, 37 ուսանող՝ 30% և 6 ուսանող 20% զեղչի):

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի 67 ուսանողի տնօրենի հրամանով նշանակվել է վարձավճարի որոշակի տոկոսով փոխհատուցում (որից 17-ը՝ 10%, 25-ը՝ 20%, 23-ը՝ 30%, 2-ը՝ 40%):

1.2.1. Ներառական կրթություն

Մասնաճյուղում հատուկ ենթակառուցվածքներ ներառական կրթության համար նախատեսված չեն: Գրադարանի մուտքը թեքահարթակ ունի, որով հատուկ օժանդակության կարիք ունեցող ուսանողների մուտքը, օրինակ, հումանիտար գիտությունների ֆակուլտետ հնարավոր է: Այդ ֆակուլտետում սովորում են հատուկ կարիքներ ունեցող 2 ուսանողներ (մեկը՝ առկա ուսուցմամբ, մյուսը՝ հեռակա), որոնք մշտապես գտնվում են դասախոսների առանձնահատուկ և անհատական ուշադրության տակ, նրանց հետ աշխատում են նաև առանձին:

Կիրառական արվեստի ֆակուլտետում սովորում է ներառման կարիք ունեցող մեկ ուսանող, որն ունի լսողական խնդիրներ: Համապատասխան սարքի օգնությամբ նա ինտեգրվել է ֆակուլտետի կրթական գործընթացին:

Մասնաճյուղի մասնաշենքերը կառուցված են խորհրդային ժամանակաշրջանում և նրանցում հաշվի չեն առնված դժվարությամբ տեղաշարժվող մարդկանց կարիքները: Այդ պատճառով մասնաճյուղը խնդիր ունի ներառական միջավայրի ապահովման հարցում, չկան հատուկ կարիքներ ունեցող անձանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ինչը դժվարացնում է նրանց ուսումնառության լիարժեք կազմակերպումը:

Պլանավորվել է տեսողության խնդիրներ ունեցող ուսանողների տեղաշարժը ապահովելու համար համապատասխան տարածքների նշագծում:

Տեղաշարժման խնդիրներ ունեցող մարդկանց համար համապատասխան պայմանների ստեղծումը ֆինանսական միջոցներ է պահանջում:

1.3.1. Գործատուների հետ համագործակցություն

Մասնաճյուղն ունի մարզի գործատուների հետ համագործակցելու ձևավորված մշակույթ:

2022-2023թթ., 2023թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում տեղական և միջազգային մակարդակներում ոլորտային գործատուների հետ կնքվել են համագործակցության 5 հուշագիր, 1 համաձայնագիր և 3 պայմանագիր:

Մասնաճյուղն ակտիվ համագործակցում է մարզի գործատուների հետ ուսանողների մանկավարժական և մասնագիտական պրակտիկաների արդյունավետ իրականացման համար:

Ուսանողների պրակտիկաների կազմակերպման համար մասնաճյուղը պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունի **14 հուշագիր և 32 պայմանագիր**:

Ուսանողների պրակտիկայի կազմակերպման մասին պայմանագրեր են կնքվել ոլորտային կազմակերպությունների հետ, մասնավորապես «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ-ի, Իջևանի համայնքապետարանի, «ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ-ի հետ (16.11.2022թ.):

2022-2023 ուստարում ԵՊՀ ԻՄ-ն համագործակցության պայմանագրեր է կնքել «ԷԼԹԻ ՔՈԴԻՆԳ» ՍՊԸ-ի (17.01.2023թ.), «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի

(19.01.2023թ.) հետ: Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են՝ ուսանողների մասնակցությամբ կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում, համատեղ ծրագրերի իրականացում, ուսանողների պրակտիկաների և աշխատաժողովների կազմակերպում, ԵՊՀ ԻՄ և կազմակերպությունների գործունեության լուսաբանման նպաստում, ծրագրերի իրականացմանն ուղղված երիտասարդների հավաքագրում, տեխնիկական միջոցների տրամադրում, ԵՊՀ ԻՄ ուսանողների ներառում կազմակերպությունների կադրային բազաներում:

Համագործակցության հուշագիր է ստորագրվել «Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամի /ԳոթուԴիլի/» հետ (21.10.2022թ.):

«Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» միության հետ (14.09.2023թ.) ստորագրված համաձայնագրով՝ միությունը կրթաթոշակ կտրամադրի ֆրանսերեն ուսումնասիրող ուսանողներին ֆրանկոֆոնիայի տարածման նպատակով:

Համագործակցության հուշագիր է ստորագրվել ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբ»-ի և «Ռեստարտ Իջևան» գիտակրթական հասարակական կազմակերպության հետ (08.11.2023թ.), որի նպատակն է աջակցել համալսարանում «Ուսանողական թվային ակումբ»-ին բարելավել ԵՊՀ ԻՄ ուսանողական և կրթական միջավայրի թվայնացմանը:

Կնքվել են համագործակցության համաձայնագրեր և պայմանագրեր արտերկրների համալսարանների, ինստիտուտների հետ.

1.**Ռուսաստանի հյուսիս-արևելյան պետական համալսարանի** հետ (24.05.2023թ.). կողմերը պարտավորվել են համագործակցել գիտակրթական և մշակութային գործունեության ոլորտներում: Գործարկել պատվիրակությունների փոխանակումներ՝ բազմամշակութային կրթական միջավայրի ժամանակակից միտումները և ավանդույթներն ուսումնասիրելու նապատակով:

2. **Վ.Ի.Վերնադսկու անվան Ղրիմի դաշնային համալսարանի** հետ (07.06.2023թ.). կողմերը պարտավորվել են համագործակցել կրթության և գիտության ոլորտում, կազմակերպել համատեղ համաժողովներ, սեմինարներ, միջազգային միջոցառումներին գործընկեր բուհից գիտնականների մասնակցությամբ, իրականացնել դասախոսների, ասպիրանտների և ուսանողների փոխանակում, կազմակերպել պրակտիկա, առաջադեմ ուսուցում:

3. **Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի** հետ (07.06.2023թ.). Համագործակցության նպատակն է զարգացնել միջազգային համագործակցությունը բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների ոլորտում: Կողմերը պարտավորվել են մշակել և իրականացնել համատեղ կրթական ծրագրեր, ուսանողների կամ ասպիրանտների փոխանակում, կազմակերպել և իրականացնել համատեղ գիտական նախագծեր, գիտաժողովներ, սեմինարներ, կլոր-սեղան քննարկումներ:

4. **Նոր բուլղարական համալսարանի** հետ (07.11.2023թ.). կողմերը պարտավորվել են իրականացնել համատեղ կրթական, ուսուցողական և/կամ հետազոտական միջոցառումներ, կազմակերպել գիտաժողովներ, սիմպոզիումներ, սեմինարներ, փոխադարձ հրավերներ ուղարկել՝ դասախոսների, ասպիրանտների և ուսանողների մասնակցության համար:

1.4.1. Ակադեմիական համակազմի նկարագիր և կարողությունների զարգացում

ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմն ըստ աշխատանքային պայմանագրի տեսակների ունի հետևյալ պատկերը.

- Հիմնական աշխատակցներ,
- ԵՊՀ-ից հրավիրված դասախոսներ-համատեղությամբ,
- Այլ բուհերից և կազմակերպություններից հրավիրվածներ-համատեղությամբ,
- Ժամավճարային հիմունքներով հրավիրված դասախոսներ:

2022-2023 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հիմնական, համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով աշխատել է 187 դասախոս (միջին թիվն ըստ կիսամյակների), այդ թվում՝ իգական սեռի 99 և արական սեռի 88 դասախոս:

Դասախոսական կազմի 23.5%-ը (44-ը) կազմել են երիտասարդ դասախոսները, 54.5%-ը (102-ը)՝ 36-63 տարեկան դասախոսները, իսկ 22%-ը (41-ը) 64 և ավելի տարեկան դասախոսները:

2022-23 ուստարում մասնաճյուղում դասավանդել են գիտությունների 10 դոկտոր-պրոֆեսոր, գիտությունների 77 թեկնածու, որոնցից 5-ը պրոֆեսորի, 43-ը՝ դոցենտի գիտական կոչումով, և առանց գիտական աստիճանի՝ 3 դոցենտ:

2022-2023 ուսումնական տարում ի պաշտոնե դասավանդել են 17 պրոֆեսոր, 51 դոցենտ, 47 ասիստենտ և 72 դասախոս:

2023-2024 ուսումնական տարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում այժմ հիմնական, համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով աշխատում է 175 դասախոս, այդ թվում՝ իգական սեռի 102 և արական սեռի 73 դասախոս:

Դասախոսական կազմի 26.3%-ը (46-ը) կազմում են երիտասարդ դասախոսները, 52%-ը (91-ը)՝ 36-63 տարեկան դասախոսները, իսկ 21.7%-ը (38-ը) 64 և ավելի տարեկան դասախոսները:

2023-24 ուստարում մասնաճյուղում դասավանդում են գիտությունների 9 դոկտոր-պրոֆեսորներ, գիտությունների 75 թեկնածու, որոնցից 5-ը պրոֆեսորի, 42-ը՝ դոցենտի գիտական կոչումով, և առանց գիտական աստիճանի՝ 3 դոցենտ:

2023-2024 ուսումնական տարում ի պաշտոնե դասավանդում են 16 պրոֆեսոր, 52 դոցենտ, 48 ասիստենտ և 59 դասախոս:

Ինչպես ցույց են տալիս թվերը՝ 2023-24 ուստարում դասախոսական կազմում թե՛ գիտական, և թե՛ պաշտոնների առումով էական փոփոխություններ չկան, և կազմը հիմնականում կայուն է:

2022-23 ուստարում միայն մասնաճյուղում աշխատող հիմնական դասախոսները (**66 դասախոս**) կազմել են ընդհանուր դասախոսական կազմի (**187**) **35.3%**-ը: Ընդ որում, նրանցից **27-ը** (**41%**-ը) գիտական աստիճան ունի, և դա կազմում է հիմնական դասախոսական կազմի (ներառյալ ԵՊՀ-ից հրավիրված դասախոսների) գիտական աստիճանով 45 դասախոսների քանակի **60%-ը:** Նշենք, որ հիմնական դասախոսական կազմում մեծ թիվ են կազմում մասնաճյուղի նախկին շրջանավարտները. մասնաճյուղի 66 հիմնական դասախոսներից **18-ը (27.3%)** մասնաճյուղի նախկին շրջանավարտներ են, և նրանցից **10-ը** (27-ի 37.3%-ը)՝ գիտական աստիճանով:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 11-ի թիվ 22 նիստում հաստատվել է 2017-2021թթ. դասախոսների վերապատրաստման կրթագիտական ծրագիրը, որով սկսվել է կրթագիտական ծրագրի իրականացման երկրորդ փուլը: Կրթագիտական ծրագրի իրականացման

շրջանակներում կազմակերպվել են դասախոսների մանկավարժական հմտությունների զարգացման և կատարելագործման ուղղությամբ մի շարք դասընթացներ: 2022-23 ուստարում իրականացվել են վերապատրաստման 14 դասընթացներ («Անձի ստեղծարարության զարգացումը մասնագիտական գործունեության մեջ», «Հոգեբանական ինքնակարգավորումը սթրեսային իրադրությունում», «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում», «Աշխատանքային իրավահարաբերություններ», «Թվային և տեղեկատվական անվտանգություն հիմունքներ», «Ներառական կրթություն», «ՏՀՏ կիրառումը աշխատանքային գործընթացում», «Supervision.ysu.am», «ԵՊՀ ԻՄ-ի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի կիրառման առանձնահատկությունները», «Ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ»), որին մասնակցել են 194 դասախոսներ և աշխատակիցներ:

1.5.1. Ենթակառուցվածքներ և պայմաններ

2022-23 ուստարում մասնաճյուղում իրականացվել են ուսումնական և վարչական տարածքների արդիականացման, վերազինման, մասնաշենքերի վերանորոգման, օժանդակ տարածքների արդյունավետ օգտագործման և լսարանների արդիականացման 43 ծրագրեր:
2022-23 ուստարում արդիականացվել է **19** լսարան (57-ից), որը կազմում է ընդհանուր լսարանային ֆոնդի շուրջ **34%-ը**: Այժմ մասնաճյուղում գործում են 4 համակարգչային սրահներ, 2-ը բնական գիտությունների ֆակուլտետում, որոնք հագեցած են ժամանակակից համակարգիչներով (յուրաքանչյուր սրահում տեղադրված է 16-20 ժամանակակից հզոր համակարգիչներ), մասնաճյուղում գործում է գերարագ ինտերնետ կապ:

«Թվային կամպուս» ստեղծելու և դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի թվային հմտությունները զարգացնելու, յուրաքանչյուր ուսանողի համար թվային ռեսուրսների հասանելիությունը ապահովելու համար ձևավորվել է թվային գրադարան, ամբողջացվել է էլեկտրոնային քարտարանը, գրադարանային սպասարկման «KOHA» համակարգում ապահովվել է առկա և համալրվող գրականության միացումը, թվայնացվել է առավել անհրաժեշտ գրականությունը, արդիականացվել գրադարանի է համացանցային կայքէջը և պարբերաբար ավելացվում է էլեկտրոնային գրքերի քանակը: ԵՊՀ աջակցությամբ ապահովվել է համալսարանական վիրտուալ տիրույթում գիտական շտեմարանների մուտքի հնարավորությունը, որի շրջանակներում տարբեր միջոցներով (առկա և օնլայն) նպաստել է իրազեկված աշխատակիցների թվին աճին:

Հաշվետու ժամանակահատվածում.

- ✓ իրականացվել է 5016 միավոր գրականության մուտքագրում «KOHA» համակարգ, ընդհանուր իրականացվել է հիմանական գրքային ֆոնդի ավելի քանի 70 տոկոսի մուտքագրում,
- ✓ ԵՊՀ գրադարանի աշխատակիցների օգնությամբ իրակացվել է 1203 անուն նոր գրականության մուտքագրում «KOHA» համակարգ,
- ✓ թվայնացվել է 15 անուն եզակի ու պահանջված գրականություն,
- ✓ գործարկվել է գրականության ձեռքբերման էլեկտրոնային պատվերի համակարգը,

- ✓ ամբիոններից տացվել է 20 պահանջագիր՝ 144 անուն / 577 միավոր գրքի պահանջ, որն իրականացվել է 80 տոկոսով,
- ✓ ձեռք է բերվել 1205 միավոր գրականություն, որից 260-ը գնման միջոցով:

Բնական գիտությունների ֆակուլտետում 2022-23 ուստարում բացվել են **2 նոր ուսումնական լաբորատորիաներ**. միկրոէլեկտրոնիկայի և թվային անվտանգության ուղղվածություններով, դրանք նպաստելու են ֆակուլտետում հետազոտական գործունեության ակտիվացմանը:

Կիրառական արվեստի ֆակուլտետում ուսանողների և դասախոսների արդյունավետ աշխատանքը ապահովելու համար թարմացվել է արվեստանոցների գույքը, ձեռք են բերվել անհրաժեշտ քանակի նոր նկարակալներ, դասընթացների իրականացման համար անհրաժեշտ նյութեր և պարագաներ: Տեքստիլ արվեստանոցի համար ձեռք է բերվել համակարգիչ, գորգագործական հաստոցները վերանորոգվել են:

Հաշվետու ժամանակահատվածում հիմնովին վերանորոգվել են փայտի, մետաղի, քանդակի, խեցեգործության արվեստանոցները, խեցեգործական վառարանը, ձեռք են բերվել քանդակի համար նախատեսված անհրաժեշտ էլեկտրական գործիքներ: ՁԵռք են բերվել պահարաններ ուսանողների աշխատանքները տարածքում ապահով պահելու համար:

Տնտեսագիտության ֆակուլտետում առկա են տեխնիկական միջոցներով հագեցած լսարաններ, որոնք կազմում են ֆակուլտետի լսարանային ֆոնդի 50%-ը և ապահովում են դասապրոցեսի արդյունավետ և բովանդակալից իրականացումը, գործում է գերարագ ինտերնետ կապ, կա սմարտ գրատախտակով 1 լսարան:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի լսարանային ֆոնդն ընդգրկում է 20 լսարան, այդ թվում՝ անգլերեն լեզվի ռեսուրս-կենտրոն, ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոն և ֆրանսերենի ուսուցման սրահ և մեկ համակարգչային սրահ, որն օգտագործվում է տնտեսագիտության ֆակուլտետի հետ համատեղ: Հաշվետու ժամանակահատվածում մեկ ուսումնական տարածք վերափոխվել է լսարանի և կահավորվել (58 լսարան): **Ֆակուլտետն ունի տեսասարքով ապահովված 9 լսարան, որոնցից մեկն ավելացել է 2022-23 ուստարում:** Ամբողջությամբ վերափոխվել է ֆակուլտետի զբաղեցրած մասնաշենքի ջեռուցման համակարգը:

Լսարանային ֆոնդը լիովին բավարար չէ ՀԳՖ-ում. յոթ կրթական ծրագրերով սովորող կուրսերի խմբերին (32 խումբ՝ առկա ուսուցմամբ) ապահովելու համար, և կրթական գործընթացները կազմակերպելիս առաջանում են որոշ դժվարություններ: Դրանք առավել ակնհայտ են դառնում, երբ սկսվում է հեռակա ուսուցման դասապրոցեսը:

ՏԳՖ-ում աշխատանքային պայմանների բարելավման և ժամանակակից մեթոդներով դասերն իրականացնելու համար պլանավորվում է ավելացնել տեսասարքերով լսարանների քանակը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2 .
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Գիտական ակտիվություն

Մասնաճյուղում գործում է 11 ամբիոն, որոնք ունեն իրենց գիտական ուղղվածությունները, որոնք հիմնականում համընկնում են դասախոսական կազմի գիտական հետաքրքրությունների հետ: Դասախոսներն իրենց գիտահետազոտական աշխատանքների արդյունքները տանում են լսարան ինքնուրույն, հետազոտական և ավարտական աշխատանքների միջոցով, ուսանողներին իրազեկում են իրենց ոլորտի արդի նվաճումների մասին՝ ներգրավելով նրանց նաև հետազոտական աշխատանքներում:

2022-2023 ուստարում մասնաճյուղի 66 հիմնական դասախոսների կողմից հրատարակվել է 56 հոդված (նախորդ ուստարում՝ 42), այդ թվում՝ ազդեցության գործակցով ամսագրերում (JCR) տպագրված 2 հոդված և 4 ուսումնական ձեռնարկ: Արդյունքում, 2022-23թ.-ին 1 դասախոսին ընկնող գիտական հրատարակությունների ցուցանիշը կազմել է **0.91** (նախորդում՝ **0.74), այսինքն 66 դասախոս-60 գիտական հրատարակություն**:

Մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի ակտիվությունն առանձնահատուկ դրսևորվել է վերջին 2 տարիներին, ինչում իրենց ազդեցությունն են ունեցել մասնաճյուղում գործող խրախուսման նոր մեխանիզմները և միջոցառումները:

Գիտական **հրապարակումների աճին աջակցել է** ԵՊՀ ԻՄ-ում 2019 թվականից գործող «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ը, որը բարելավվել է 2022թ.-ին, ինչպես նաև գիտական կոչումներով պայմանավորված աշխատավարձների տարբերության աճը:

2022-2023թթ. արդյունք է գրանցվել նաև արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների ցուցանիշում. 9 հրատարակություններ և հաշվեկշիռը մասնաճյուղում կազմել է **15. 0%** (նախորդ տարիներին 0), որը պայմանավորված է Օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի խորհրդական Ս. Մինասյանի նախաձեռնությամբ ԵՊՀ ԻՄ–ում կազմկերպված «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» երկու միջազգային գիտագործնական համաժողովներով, որոնցից առաջինը կայացել է 2022թ. մարտին, երկրորդը՝ 2023թ. ապրիլին, նաև ԵՊՀ ԻՄ միջազգային համագործակցության ակտիվությամբ:

Հետազոտական գործունեության վրա ազդեցություն են ունեցել նաև 2021թ.-ից պարբերաբար կազմակերպվող ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային մրցույթները: 2022 թվականին իրականացվել են 5 ներքին դրամաշնորհային ծրագրեր, որոնցում ընդգրկված են եղել 12 դասախոս (3-ը՝ երիտասարդ) և 5 ուսանող: Առանձնահատուկ պետք է նշել, որ բոլոր 5 դրամաշնորհների թեմաները նվիրված են Տավուշի մարզի տարատեսակ խնդիրների ուսումնասիրությանն ու դրանց լուծման համար առաջարկներ ներկայացնելուն, մասնավորապես.

- ✓ Տնտեսագիտության ֆակուլտետից ներկայացված 1 թեմայի իրականացման շրջանակներում ուսումնասիրվել է Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները,

նշվել են այդ ոլորտում մարզում առկա հիմնախնդիրները (ղեկավար՝ Ա.Պոտոսյան),

✓ Հումանիտար ֆակուլտետից ներկայացված 1 թեման պատմական անցյալի նորովի ուսումնասիրությունն է և վերաբերում է 1920-1970-ական թվականների Իջևանի հասարակական-մշակութային կյանքին՝ առօրեականության համատեքստում (ղեկավար՝ Ա.Ազատյան),

✓ Բնական գիտությունների ֆակուլտետից հաշվետու ուստարում իրականացվել է 3 թեմա, որոնք ուսումնասիրել են Տավուշի մարզում օրգանական գյուղատնտեսության զարգացման հեռանկարները (ղեկավար՝ Գ.Սիմոնյան), մարզի հանրակրթական դպրոցների և բուժհիմնարկների շրջակայքում աղմուկի աստիճանը (ղեկավար՝ Ա.Մարգարյան) և 3-րդ թեմայի շրջանակներում Տավուշի մարզի ջերմատնային տնտեսությունների համար մշակվել է ինֆորմացիոն ցանց (ղեկավար՝ Ռ.Յոլչյան)։

Չնայած նշված ձեռքբերումներին, մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության ոլորտում նվաճումներն առանձնապես մեծ չի կարելի համարել, առավել ևս հիմնական դասախոսական կազմի գիտական արդյունքներում։

Վերևում նշված գործընթացների արդյունքները համահունչ են ԵՊՀ ԻՄ պահանջմունքներին, սակայն դասախոսների մոտիվացիան բարձրացնելու և գիտահետազոտական գործունեությունն էլ ավելի ակտիվացնելու համար կարելի է.

✓ ավելացնել դրամաշնորհներին տրվող ֆինանսական միջոցների ծավալը. 2022-23 ուստարվա դրամաշնորհների ֆինանսավորման համար մասնաճյուղը հատկացրել էր 3 մլն. դրամ,

✓ հստակեցնել դրամաշնորհի մրցույթին առավել գործնական թեմաների ընդգրկման մեխանիզմները,

✓ հավելավճարների կարգում տրվող գումարները հավասարեցնել, կամ գոնե մոտեցնել ԵՊՀ-ում տրվող հավելավճարների չափին,

✓ մասնաճյուղում կազմակերպել հանրապետական և միջազգային գիտաժողովներ, որոնց դեպքում տեղում մասնակցության հնարավորություններն ավելի լայն են,

✓ աջակցել դասախոսներին դրսում գիտաժողովների մասնակցելու գործում և այլն։

Անհրաժեշտություն է առաջացել Մասնաճյուղում ունենալ հետազոտական աշխատանքները համակարգող կառույց։

2.2. Գիտահետազոտական լաբորատորիաներ և մասնակցություն ֆինանսավորվող գիտական նախագծերին

Բնական գիտությունների Ֆակուլտետի աշխատակիցները մասնակցել են **միջազգային դրամաշնորհային ծրագրի** («Հողի էլեկտրաքիմիական պարամետրերի չափման սենսորի և նրա վրա հիմնված ավտոմատացված համակարգի մշակում», EU-Austria, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ծրագրի գումարը՝ 6200 եվրո)։ Միջազգային ծրագրի գումարների միջոցով ֆակուլտետի ռոբոտաշինության լաբորատորիան ձեռք է բերել 1 դրոն, 2 դյուրակիր համակարգիչ, ռադիոդետալներ և չափիչ սարքեր։

Պատմության և հասարակագիտության ամբիոնի երկու դասախոս շահել են ԳԱԱ

կազմակերպած դրամաշնորհային երիտասարդական ծրագրերի մրցույթում՝ ««Մշակ» լրագիրը որպես առօրեականության և հասարակական գործընթացների սկզբնաղբյուր» ծրագրով:

Մասնաճյուղը չունի բազային և գիտահետազոտական այլ բնույթի լաբորատորիաներ:

Անհրաժեշտ է ԵՊՀ–ից հրավիրել այնպիսի մասնագետներ, որոնք ունեն բազային և գիտահետազոտական այլ բնույթի դրամաշնորհներ գրելու փորձառություն և փորձել ԵՊՀ ԻՄ-ում ստեղծել գիտահետազոտական լաբորատորիա:

2.3. Գիտակրթական համագործակցություն

2023թ. հուլիսի 1-ից օգոստոսի 1-ը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում «Project Ijevan Valley EdTech Summer School-2023» նախագծի շրջանակներում ԱՄՆ-ի Այովայի համալսարանի 9 ուսանողների համար իրականացրել է «Բազմամշակութային աշխարհում ռուսաց լեզվի և մշակույթի ուսանողների կրթության արդյունավետության բարձրացում Հայաստանում» խորագրով 3 շաբաթ տևողությամբ **ամառային դպրոցը**: Դպրոցն իրականացվել է ծրագրի ղեկավար և համակարգող, ԵՊՀ ԻՄ-ի օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մինասյանի, ծրագրում ներգրավված մասնաճյուղի 6 դասախոսների և ԱՄՆ-ի Այովայի համալսարանի Համաշխարհային լեզուների, գրականության և մշակույթների ռուսական ծրագրի տնօրեն, ծրագրի ամերիկյան կողմից համակարգող Իրինա Կոստինայի մասնակցությամբ:

Սա լավ նախադեպ է կազմակերպելու ամառային դպրոցներ արտասահմանյան ուսանողների ուսանողների համար, որը կարող է հանգեցնել նոր համագործակցությունների և նաև լրացուցիչ ֆինանսական մուտքերի: 2023-24 ուստարվա համար նախատեսվում են երկու նմանատիպ դպրոցների կազմակերպում իտալացի և լեհ ուսանողների համար:

Մասնաճյուղի դասախոսները հաշվետու ժամանակահատվածում մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների, այդ թվում.

1. Լիբանանի Բեյրութ քաղաքում՝ Հայկազյան համալսարանի և Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի նախաձեռնած «Հայության տեղաշարժերը և փոխակերպումները 20-րդ դարում և 21-րդ դարասկզբին (1900-2020թթ.)» խորագրով միջազգային երկրորդ գիտաժողովին,
2. ՌԴ Սոչի քաղաքում՝ Երիտասարդ գիտնականների ԱՊՀ միջազգային 3-րդ գիտաժողովին,
3. ՌԴ Սանկտ-Պետերբուրգ քաղաքում՝ «XXXVIII կանոնիկ ընթերցումներ» միջազգային գիտաժողովին,
4. մեր դասախոսը մասնակցել է Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում կայանալիք միջազգային մրցաշարին՝ որպես Հայաստանի բադմենթոնի պատանեկան հավաքական թիմի գլխավոր մարզիչ,
5. մեկ դասախոս գործուղվել է Մալթայի Մսիդա քաղաք Էրազմուս+ ծրագրի շրջանակում Մալթայի համալսարանում դասախոսություններ կարդալու նպատակով,
6. մեկ երիտասարդ դասախոս ՌԴ Մոսկվա քաղաքի գիտական հաստատություններում անցել է ստաժավորում՝ «Սառը պատերազմի ազդեցությունը հասարակական-քաղաքական գործընթացների վրա Աֆղանստանում» թեմայով,
7. մեկ դասախոս ՌԴ Նիժնի Նովգորոդ քաղաքում մասնակցել է Մաքսիմ Գորկու անվան

գրականության փառատոնին,

8. մեկ դասախոս ՌԴ Մոսկվա քաղաքում մասնակցել է «Ռուսաստան-Հայաստան» ֆորումին:

Մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետը ակտիվ համագործակցում է ՀՀ ԿԲ-ի, «Կանաչ տուն», «Լաստիվեր ռեզորթի» կազմակերպությունների հետ և ֆակուլտետի ընդհանուր գործունեության վրա դրական է ազդել նրանց կադրային ներուժի ներգրավումը դասավանդման գործընթացում: Դա հնարավորություն է տալիս ավելի մոտ գտնվելու աշխատաշուկային, ծանոթանալու ոլորտի արդի խնդիրներին, նպաստում է կիրառական գիտելիքների և կարողությունների զարգացմանը: Դրական ազդեցություն են ունենում նաև ԱՄՆ զբոսաշրջության փորձագետ Ջոն Հիֆլրի հետ հաճախակի կազմակերպվող սեմինարները, գիտաժողովները, դասընթացները: Ֆակուլտետի դասախոսները և ուսանողները հաշվետու ժամանակահատվածում մասնակցել են ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի կողմից կազմակերպված «Բիզնեսի կազմակերպման նորարարական մոտեցումները ՀՀ-ում» թեմայով դասախոսության, որը վարել է դանիացի մասնագետը:

2023թ.-ի հունվարին **Գյումրիի Ռուսական տան** հետ համատեղ գիտակրթական համագործակցության շուրջ մասնաճյուղում տնօրենության ղեկավարությամբ առցանց **հանդիպում է կազմակերպվել Ղրիմի դաշնային համալսարանի** հետ, որին մասնակցել են ֆակուլտետի Օտար լեզուների ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մինասյանը, նույն ամբիոնի դոցենտ, Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի Իջևանի մասնաճյուղի ղեկավար Մարատ Զուրաբյանը:

Ֆրանկոֆոնիայի և քույր քաղաքների բարեկամության շրջանակներում 2023թ.-ի մարտի 28-ից Վալանսի քաղաքապետարանի և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հրավերով մասնաճյուղի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ և 3-րդ կուրսերի 5 ուսանողուհիներ դասախոս Անահիտ Հովհաննիսյանի ուղեկցությամբ երեքշաբաթյա **այցով մեկնել են Վալանս՝** կատարելագործելու մասնագիտական գիտելիքները և բանավոր խոսքը՝ մասնակցելով դասընթացների և հանդիպումների, կատարելով ճանաչողական այցեր:

2023թ.-ի նոյեմբերին Ուրալի պետական համալսարանում կայացած «Ռուսական տարածաշրջանները փոփոխման կենտրոնում» թեմայով **միջազգային 18-րդ համաժողովում** իրենց կարդացած զեկուցումների համար մասնաճյուղի երկու ուսանողուհիներ արժանացել են 1-ին կարգի դիպլոմների:

2.4. Գիտական միջոցառումների կազմակերպում և մասնակցություն

2023թ. ապրիլի 15-16-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն առկա և առցանց ձևաչափով իրականացրել է «Սոցիալ–մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» երիտասարդ գիտնականների միջազգային գիտագործնական 2-րդ համաժողովը, որին մասնակցել են 16 երկրների (Հայաստան, Ալժիր, Բելառուս, Վրաստան, Իրաք, Իրան, Ղազախստան, Ղրղզստան, Չինաստան, Լեհաստան, Ռուսաստան, Տաջիկստան, Թաթարստան, Ուզբեկստան, Ուկրաինա, Ֆինլանդիա) 62 համալսարանների բակալավրիատի և մագիստրատուրայի տարբեր մասնագիտությունների 215 ներկայացուցիչներ՝ ուսանողներ, երիտասարդ դասախոսներ և

գիտնականներ:

Համաժողովի նպատակն էր ուսանողական հետազոտությունների խթանումը, ուսանողների՝ մագիստրոսների, ասպիրանտների ստեղծագործական ներուժի բացահայտումը, ուսանողների և դասախոսների ներբուհական և միջբուհական համագործակցության զարգացումը, երիտասարդության ուշադրության կենտրոնացումը ժամանակակից մանկավարժական հետազոտությունների կարևորության վրա:

Կազմակերպչական խմբում ներգրավված էին մի շարք համալսարանների միջազգային գործընկերներ (Ռուսաստանի դաշնություն, Ֆինլանդիա, Ղրղզստան, Ուզբեկստան), որոնց թվում մանկավարժական, բանասիրական և փիլիսոփայական գիտությունների 8 դոկտորներ և մեկ թեկնածու: Համաժողովի շրջանակներում մասնաճյուղն ունեցել է Հյուրեր Մոսկվայից, որոնց թվում նաև 10 ուսանող:

1-ին համաժողովի նյութերի ժողովածուն հրատարկվել է մասնաճյուղի կողմից, իսկ 2-րդ համաժողովի հոդվածների ժողովածուն հրապարակվել է էլեկտրոնային տարբերակով (կարող եք տեսնել հետևյալ հղումով):

2-րդ գիտաժողովի արդյունքում էր, որ 2023թ. կյանքի կոչվեց «Բազմամշակութային աշխարհում ռուսաց լեզվի և մշակույթի ուսանողների կրթության արդյունավետության բարձրացում Հայաստանում» խորագրով ամառային դպրոցը և 2022-23 ուստարվա արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թվի աճը (0-ից 9-ը): Գիտաժողովի հետևանք էր նաև ՌԴ-ի 3 համալսարանների՝ «Северно восточный государственный университет», «Московский педагогический государсвенный университет», «Крымский федеральный университет имени В.И.Вернадского», հետ կնքված համագործակցության պայմանագրերը:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Ավագյանի նախաձեռնությամբ Երևանի պետական համալսարանի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան Հայ գրականության պատմության ամբիոնը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց լեզվի և գրականության ամբիոնը և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը համատեղ կազմակերպել են **հայագիտական միջազգային գիտաժողով**՝ նվիրված 20-րդ դարի գրական, հասարակական ու մշակութային նշանավոր գործիչ Արշակ Չոպանյանի ծննդյան 150-ամյակին: Գիտաժողովի նիստերը տեղի են ունեցել Գրականության և արվեստի թանգարանում և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում՝ **2022թ. հոկտեմբերի 7-ին և 8-ին**: Հանրապետության և արտերկրի տարբեր գիտակրթական կենտրոններից, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից մասնակիցների զեկուցումները վերաբերում էին հայ մշակույթի երախտավոր Արշակ Չոպանյանի ազգային-հասարակական գործունեությանը, գրական գործերին, թարգմանչական աճխատանքներին, բանասիրական ու գրաքննադատական ուսումնասիրություններին: (http://ijevan.ysu.am/11-10-2022/)

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

3.1. Ծուկայի ուսումնասիրում և պահանջարկին համապատասխանեցում

Մասնաճյուղը, որպես հիմնականում տարածաշրջանային դերակատարության կրթական և գիտամշակութային հաստատություն, առաքելություն ունի նպաստելու տարածաշրջանում մշակութային կյանքի զարգացմանը և ամենակարևորը, համալրելու տարածաշրջանը անհրաժեշտ մասնագետներով: Այդ պատճառով նրա ուշադրության կենտրոնում են արտաքին շահակիցների կարիքներն ու խնդիրները, աշխատաշուկայում նրանց առաջարկներն ու զարգացման միտումները:

Առաջնորդվելով այդ տեսլականով մասնաճյուղն իր արտաքին շահակիցներին ներգրավել է մասնաճյուղի և ֆակուլտների ԳԽ-ներում, գործող բոլոր հանձնաժողովներում, կրթական ծրագրերի կազմման, վերանայման և մոնիթորինգի խմբերում:

Մարզի ոլորտային գործատուների և ձեռնարկությունների հետ համագործակցությունները համակարգելու և կանոնակարգելու համար բացի համագործակցության պայմանագրերից ու հուշագրերից մասնաճյուղի ՄԿՈԱ, ՊԿՇՀ և ԿԲԴՎ բաժինների կողմից մշակվել են և հաստատվում են համապատասխան փաստաթղթեր, կատարվում են ուսումնասիրություններ և վերլուծություններ: Հաշվետու ուստարում այդ տեսանկյունից իրականացվել են հետևյալ գործընթացները.

1. Ուսանողներին ուղղորդելու և աշխատաշուկայում կողմնորոշվելու համար իրականացվել է աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն և վերլուծություն, կազմվել և հրապարակվել է 2022թ. մայիսի դրությամբ Տավուշի մարզի աշխատաշուկայում իրավիճակը, ներկայացվել է Հայաստանում, Ռուսաստանում և աշխարհում ամենապահանջված մասնագիտությունների ցանկը, վերլուծվել և հրապարակվել է ընդհանուր իրավիճակը: Մշակվել են աշխատաշուկայի պահանջարկի գնահատման մեխանիզմներ:
2. Մշակվել և **ԳԽ-ում հաստատվել** է **(29.04.2023թ.)** «ԵՊՀ ԻՄ-ում լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների իրականացման կարգ»-ը: Մշակվել է նաև շահակիցներին լրացուցիչ կրթական ծառայության մատուցման պայմանագրի ձևաչափը:
3. Տարածաշրջանի ձեռնարկությունների հետ համագործակցության իրականացման և ակտիվացման, ուսանողների մասնագիտական և բիզնես կարողությունների զարգացմանն աջակցելու և այդ գործընթացները կանոնակարգելու համար մշակվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և ձեռնարկությունների հետ համագործակցության ապահովման կարգ»-ը, որը պատրաստ է հաստատման:
4. Ուսումնասիրվել է մարզում լրացուցիչ պրակտիկաների իրականացման հնարավորությունները և մշակվել է «ԵՊՀ ԻՄ-ում լրացուցիչ պրակտիկաների իրականացման աշխատակարգ»:
5. մշակվել են ոչ ֆորմալ կրթության իրականացման գործընթացում նորարարական մոտեցումների և մեթոդների կիրառման համար խրախուսման մեխանիզմներ
6. ՀՀ ԿԳՄՍ նախարարության երաշխավորությամբ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում իրականացվել են հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումներ. վերապատրաստվել են Տավուշի և հարակից մարզերի շուրջ 70 ուսուցիչ:

Մասնաճյուղի ՄԿՈԱ և ՊԿԾՀ բաժինները պարբերաբար տարբեր մեխանիզներով իրականացնում են մի շարք գործընթացներից մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրություններ, որոնց արդյունքները հնարավորություն են տալիս վեր հանել շահակիցների կարիքներն ու խնդիրները, որոնց լուծումներն ուղղորդվում են անհրաժեշտ գործընթացների բարելավմանը: Օրինակ, վերջին տարիներին պրակտիկաների ծրագրերում կատարված փոփոխությունների և գործատու կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության արդյունքում բարելավվել է պրակտիկաների իրականացման որակը և ուսանողները բավարարված են (միջին գնահատականը 4.5) պրակտիկաների իրականացումից և պրակտիկայի ընթացքում ձեռք բերած մասնագիտական կարողություններից:

Գործատուների հետ համագործակցության փաստերը ներկայացված են 1.3.1բաժնում:

3.2. Շրջանավարտներ

2022-2023 ուստարում բակալավրիատի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են 232 (նախորդ ուստարում՝ 258) ուսանողներ (որոնցից 129-ը՝ առկա ուսուցման, 91-ը՝ հեռակա ուսուցման բակալավրիատում, 12-ը՝ մագիստրատուրայում) և նրանք բոլորը ստացել են դրական գնահատականներ, ընդորում նրանցից **97-ը** (41.8%-ը) ստացել է 18-20 միավոր, **86-ը** (37.1%-ը)՝ 13-17 միավոր և միայն 49 շրջանավարտ է մասնաճյուղն ավարտել «բավարար» առաջադիմությամբ:

Այստեղ պետք է նշել, որ շրջանավարտներից **42-ը** (18%-ը) մասնաճյուղն ավարտել է գերազանցության դիպլոմով, որոնցից 36-ը առկա և 1-ը հեռակա բակալավրիատը և 5-ը՝ մագիստրատուրան:

2023թ.-ի մայիսին առկա ուսուցման շրջանավարտների շրջանում ՄԿՈԱ բաժնի կողմից անցկացրած «ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածությունը» առցանց հարցման արդյունքներով հարցմանը մասնակցած 124 շրջանավարտների **40%-ը** (50-ը) ավարտելու պահին արդեն աշխատում էր, ընդ որում նրանցից **25-ը**՝ մասնագիտությամբ:

Այս ցուցանիշի մեջ էական արդյունք են գրանցել ԻԿՄ, ԴԿԱ և ԱԼԳ կրթական ծրագրերի շրջանավարտները.

- ✓ հարցմանը մասնակցած ԻԿՄ կրթական ծրագրի 19 (21-ից) շրջանավարտներից 13-ը ավարտելու պահին աշխատում էր, որոնցից 10-ը՝ մասնագիտությամբ, շրջանավարտներից 3-ը շարունակում է աշխատել ֆակուլտետում գործող «Թվային Հայք» լաբորատորիայում:
- ✓ ԴԿԱ կրթական ծրագրի 8 շրջանավարտներից 5-ը ավարտելու պահին աշխատում էր, 4-ը՝ մասնագիտությամբ,
- ✓ ԱԼԳ կրթական ծրագրի 19 շրջանավարտներից 9-ը ավարտելու պահին աշխատում էր, 4-ը՝ մասնագիտությամբ:

Սրանք բավականին լավ ցուցանիշներ, ինչը վկայում է, որ մասնաճյուղի շրջանավարտները աշխատաշուկայում պահանջված են, մասնավորապես, օրինակ մարզի ծրագրավորման ընկերություններն իրենց աշխատակազմը համալրում են մեր շրջանավարտներով և ուսանողներով:

Մասնաճյուղում գործում է շրջանավարտների հետ կապի բաժին (ՊԿԾՀ բաժին), որն

ապահովում է մարզի գործատուների հետ համագործակցությունը դիմորդների մասնագիտական կողմնորոշման, ուսանողների պրակտիկաների և շրջանավարտների կարիերայի աջակցման հարցերում:

Շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրության նպատակով մասնաճյուղը համագործակցում է Տավուշի մարզի սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի և մարզպետարանի համապատասխան բաժնի հետ: Միայն 2022-2023 ուստարվա և 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում «ԵՊՀ ԻՄ շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ կապ» ֆեյսբուքյան էջում տեղադրվել է 107 թափուր աշխատատեղերի հայտարարություն:

ՄԿՈԱ բաժնում գործում է մասնաճյուղի շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների բազա, որում հաշվառված են 3000-ից ավել շրջանավարտներ, տվյալները պարբերաբար թարմացվում են և հավաքված տվյալների արդյունքում հնարավոր է դառնում աջակցել մարզի գործատուներին համապատասխան որակավորում ունեցող կադրերի փնտրման գործընթացում: Նշենք, որ նման համագործակցության արդյունքում մասնաճյուղի շատ շրջանավարտներ աշխատանք են գտել:

Որպես կարևոր ձեռքբերում նշենք, որ մասնաճյուղի տարբեր տարիների **67 շրջանավարտներ աշխատում են մասնաճյուղում**, նրանցից 37-ը դասախոսում է և նրանցից 11-ն ունի գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հաշվետու ժամանակաշրջանում շրջանավարտների հետ կապերի ամրապնդմանն ուղղված կարևոր իրողություն պետք է համարել այն, որ ֆակուլտետի 6 շրջանավարտներ դարձան մեր աշխատակիցները՝ ընդգրկվելով Օտար լեզուների և Մանկավարժության և հոգեբանության ամբիոնների աշխատանքներում:

2022-23թ. ուստարվա ուսումնասիրությունների արդյունքներով.

- ✓ Մասնաճյուղի շրջանավարտները բավարարված են ստացած կրթությունից՝ միջին գնահատականը ձգտում է 4.5-ի,
- ✓ մասնաճյուղի շրջանավարտներից արտաքին շահակիցների բավարարվածության միջին գնահատականը 4.0 է, շատ բարձր չէ, սակայն մասնաճյուղի շրջանավարտները պահանջված են մարզի աշխատաշուկայում՝ ինչի մասին գործատուները գրում են բաց հարցերում:

Մասնաճյուղում առայժմ չի ստեղծվել «Շրջանավարտների միություն», որի միջոցով հնարավոր է **ամրապնդել համագործակցությունը նախկին շրջանավարտների** հետ, նրանց ներգրավել տարաբնույթ միջոցառումներում և գործընթացներում, ներգրավել ներդրումներ և այլն:

Հաջորդիվ քայլեր

Մասնաճյուղը նախատեսում է շարունակել իրականացնել 2022-26թթ. զարգացման իր ռազմավարական ծրագրի նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունները՝ արդեն հաստատված պլան-ժամանակացույցին համապատասխան՝ ավելացնելով սույն հաշվետվության մեջ վեր հանված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միձոցառումները: